



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1526

1527

րատ. Թիֆլ. Ընկեր. հայերէն գրքերի հրատարակութեան

№ 32

83 - 3  
4 - 15

Գ. ՎԱԼԴԵՆԵՐ

1528

1529

ՀԱՒԱՏԱՐԻՄ ՍԱՎԻՏՐԻՆ

ԵՕՀԱՆՆԱ ՍՊԻՐԻ

ՈՒՌԵՆՑ ՅՈՎՍԷՓ

ՄԱԲՍ ՌՕԶԵՆՀԱՅՆ

ՆԱԻՒ ՓՈՔՐԱԻՈՐԸ

ԿՈՄ

ՊԱՏՈՒԻՐ ՀՕՐԴ ԵՒ ՄՕՐԴ

ՓԵՐԴԻՆԱՆԴ ՂՄԻԴՏ

ՆԱԼ ԵՒ ԴԱՄԱՅՆԱՆԹԻ

ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌԱԿ

2011

Հրատ. Թիֆլ. Ընկ. Հայերէն գրքերի Հրատարակութեան

83-3

հ-62

№ 35

ՄԱԳՍ ՌՕԶԵՆՀԱՅՆ

## ՆԱԻՒ ՓՈՔՐԱԻՈՐԸ

ԿԱՄ

ՊԱՏՈՒԻՐ ՀՕՐԴ ԵՒ ՄՕՐԴ

Գերմաներէնից քարգմանեց

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼՍԼԱՅԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ձ

Տ ւ յ ա ր ա ց Մ ո ղ ս ե ս Վ ա ր դ ա ն ե ա ն ի

Типографія М. Вартанянца, Гановская ул. д. № 3.

1891

1002  
6028

335  
8

ՀԱՅԿ ԶԻՆԱՎՐՅՈՒ ԵՐԵՄ ՅԱՐ,  
ԾԱՅՈՒՐԵԱՆՈՒ ՀԱՅՈՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ,  
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՊԵՏՈ ՍԳՆ,  
ՅԱՐԹԵԱՆ ՍՈՍՆԻՆ ՏԱՐԵԿԱՐԱՆ  
28 ՄԱՅԻՍԻ 1919 Ք.

# 1. ՓՈԹՈՐԻԿ

Մի սաստիկ փոթորկալից եղանակ սեւ ծածկոցի նման պատել էր ծովերին իշխող Դանցիգ քաղաքը։ Սակերը գոռում էին անընդհատ, եւ երբեմն ահեղ թնդիւնները, լայնածաւալ, հրաւառ կայծակների հետ, որոշ ցոյց էին տալիս, որ շուտով մի սոսկալի փոթորիկ պիտի փրթի, եւս առաւել վտանգաւոր մանաւանդ այն պատճառով, որ ոչ մի անձրեւի կաթիլ չէր զովացնում եռացող ամպերի տապը։

Այդ սոսկալի միջոցին Զօնը, մի տասնեւհինգ տարեկան պատանի, աներկիւղ կանգնած էր փարոսի պատուանդանի մօտ, այն քարէ պատնէշներից մէկի վրայ, որոնք բաւական հեռու ծովի ներսում կանգնեցրած, պաշտպանում են Վալքսելի գետաբերանը, որ այստեղ Դանցիգի նաւահանգիստն է կազմում։ Քամին շաղ էր գցում տղայի երկայն մազերը եւ ամառական թեթեւ ու թրթռուն հագուստը։ Իսկ

Дозволено Цензурою Тифлисъ, 28-го Апрелья 1891 г.  
Тип. М. Вартамянца, Гановская ул. д. № 3

նա անշարժ կանգնած էր իւր տեղում եւ իւր եթերական դիրքից աչքերն անթարթ յառած ալիքների վայրագ խաղին, որոնք մէկը միւսի ետեւից, փոթորկի հարուածների տակ, փրփրաթաթախ նոսրացների նման, այստեղ նաւագործարանի տաշած քարերին էին զարկւում, այնտեղ դէպի տափարակ ծովափն էին վազում ու խաղում մրրկայոյզ սաթով առատ ծովասէգերի, խխունջների ու ծովային խոտերի հետ, որոնց յափշտակելու համար ուրուրները ճչալով կուռում էին իրարու հետ: Ձկնորսական նաւակների մի փոքրիկ խումբ վստահացել էր ծովը մտնել, մասամբ թառափ որսալու, մասամբ արեւելեան ծովի ոսկին—պատուական սաթը ժողովելու, որի հաւաքելը հիւսիսային քամու փչելու ժամանակ մանաւանդ շատ յաջող է լինում: Փոքրիկ առագաստաւոր նաւակները, ընկոյզի կճեպների նման ցատքըտում էին փրփրադէզ ալիքների վրայ: Բայց շատ չանցաւ, եւ ահա քաջասիրտ նաւորդները, փոթորկի սաստկանալը եւ խաւարի թանձրանալը տեսնելով, սկսեցին ահ ու դողով արագ-արագ դէպի ապահով նաւահանգիստը վերադառնալ:

Հեռւում մի առեւտրական նաւ, կարծես,

մեծ ջանք էր անում ափին մօտենալու, բայց նորից անյայտացաւ, որովհետեւ քամին շատ թունդ կերպով էր փչում դէպի ցամաքը: Մութ գիշերը վրայ հասաւ եւ ամեն բան ծածկեց: Հազիւ երբեմն լուսինը փայլում էր թանձր ամպերի կտորների միջով, կամ կայծակները ճեղքում էին օդը, այնպէս որ երբեմն միակնթարթ գիշերային թանձր խաւարը փոխւում էր ըռպէական լոյսի, որով հեռաւոր առարկաները ճանաչւում էին:

Ցանկարժ փարոսի գմբէթը մի բոցափայլ կրակով վառուեց եւ իւր շլացնող լոյսն արձակեց հեռուն՝ դէպի յուզուած ծովի խորքերը: Տղան տեսաւ իւր դիմացը՝ ուղղակի քարեղէն պատնէշի ծայրին կանգնած երկու մարդ, որոնք երկուսն էլ, թխագոյն մորթէ բաճկոնները հագներին, կաշուէ գլխարկ ծածկած, իրենց՝ այդ գիշերային փոթորկին յարմարող անձերը փոթորկին էին ենթարկել: Նրանք, ալիքների մռնչիւնի տակ, որոնց այնքան մօտիկ էին կանգնած, կարծես, չէին կարողանում իրարու հասկացնել, որ իրենց շորերը ալիքների փրփուրից բոլորովին թաց են եղել: Երբեմն նշաններով էին իրարու հետ խօսում: Մէկն իւր աջ ձեռքում ունէր մի մեծ ճան-

կաւոր ձող, միւսը՝ հաստ չուսններ։ Նրանց կրծքի պղնձէ փոքրիկ վահանակներից հասկացաւ Ջօնը, որ նրանք նաւուղիդներ էին։ Առաջինը, ձեռքը մեկնած, դէպի հեռուն էր ցոյց տալիս, իսկ երկրորդի աչքը դարձած էր դէպի մատնացոյց արած կողմը, մինչդեռ ինքը մի բանի անհասկանալի խօսքեր էր մրթմրթում։ Փոթորիկը թնդանօթի մի խուլ պայթիւն բերեց յուզուած ծովի մունչիւնի միջով։ Ուրիշ պայթիւններ էլ լսուեցան մէկը միւսի ետեւից։ Ամեն մի պայթիւնը մի թեթեւ փայլ էր ձգում մի մեծ, աղօտ առարկայի, ըստ երեւութին, կորստի մատնուած մի նաւի վրայ, որ ծանծաղի հանդիպած, իւր տագնապն էր յայտնում թնդանօթի հարուածներով եւ օգնութիւն էր խնդրում։

Ջօնը մօտեցաւ այն մարդկանց եւ լսեց նրանցից այս խօսքերը թէ՛ «երկար չի տեւիլ, Ջէմս, որ նրանք պիտի նստած կըլինին ծանծաղի վրայ»։

— Թրխկացրէք, թրխկացրէք, վրայ բերեց միւսը, — երբ ավերիւք ոտքով գլխով ծովի տակը կ'անէք, վառօդն առանց այն էլ բանի պէտք չի գալ։

— Ես գրաւ կըզամ, Ջէմս, որ այդ նա-

ւի ցուկը մի կանգունի չափ խոր թաղուած է ծանծաղի մէջ, գոչեց առաջինը։ — Խեղճ Մարիամ, նրա առաջին ճանապարհորդութիւնն էր. ափսոս, հազար ափսոս։

— Ի՞նչ ես ասում, Մարիամը, առայ Ջէմսը զարմացմամբ, — անկարելի է. նա պիտի թեւեր ունենար, որ կարողանար այդպէս շուտ վերադառնալ Համբուրգից։

— Բայց ասածս ասած է, Ջէմս, պատասխանեց միւսը։ — Արեւս վկայ, Միւլլերի Մարիամն է այնտեղ խոր նստածը։ Ես ձեզ վաղուց էի ասում, որ այդ թեթեւ, հօսրակող բանը ծովի առաջին կատակին չի դիմանալ, շնչի նման կըջքանայ. եւ իմ խօսքս տեսնոր, Ջէմս, գլուխ եկաւ։ Համբուրգից եկող Մարիամն է դա, որի կողերը փոթորիկն այնպէս է ջարդ ու փշուր արել, որ նա լոկ ահից ուզում է տրաքել։

— Ա՛յ դու քամու տոպրակ Դիւէլ, կանչեց Ջէմսը, — իրաւ, կարելի՛ բան է այդ։

— Լաւ որ այդ դժբաղդութիւնը մի ուրիշի գլխը չեկաւ, այլ հենց Միւլլերի, այդ աչքածակ ոսկու կարասի գլուխը, շարունակեց առաջինը։ — Կեղտոտ շուն. տեղն էր իրեն, այդ ժլատ անիծուածին։

Նա ուզում էր իւր խօսքը շարունակել։

բայց յանկարծ մի բռունցքի հարուած իջնելով նրա ուսին՝ լռեցրեց նրան։ Դա նաւուղիդներին հրամանատարն էր, որ իւր մարդկանց հետ մօտեցել էր սրանց։ Նոյն վայրկեանին թնդանօթի երեք հարուածներ մէկը միւսի ետեւից թնդացին ծովի կողմից՝ շատ մօտիկից։ Փայլակները որոշակի ցոյց տուին թէ՛ ինչպէս խրուած նաւի վերջին կայմը կոտորուելով՝ եզրի վրայով ծովն ընկաւ։

— Դա Միւլլերի Մարիամն է, տղայք, կանչեց հրամանատարը։— Գոնէ կարողանայինք նաւաստիներին ազատել։

— Ծովը սաստիկ յուզուած է, ասաց Ջէմսը, — հազիւ թէ վստահանանք նաւարկել։

— Այն էլ Միւլլերի երկու — կայմանի նաւն է, վրայ բերեց Դիւէլը։— Այդ փոքրիկ դասը նրան չի վնասիլ, կարծեմ։

— Փորձանքը նրան խելքի կրբերի, շարունակեց Ջէմսը, — նրա նաւերը այսուհետեւ հաստ կողեր կ'ունենան։

— Սո՛ւս, տղայք, կանչում են, ընդհատեց հրամանատարը։— Ականջ դրէք։

Յիրաւի հատ-հատ ճիչեր լսուեցան փոթորկի շառաչիւնի միջով։ Յետոյ ամեն ինչ լռեց։ Թնդանօթի ձայնը կտրուեց, եւ գրեթէ

կէս ժամ անցաւ, մինչեւ որ դարձեալ մի բան երեւաց, մի մութ առարկայ, որին ալիքները մի ակնթարթում աչքից խլեցին դարձեալ, եւ որ, կարծես, գնալով մեծանում ու սաստիկ ուժով մօտ էր մղւում։ Ելի փոքր ժամանակ անցաւ, եւ ահա ասես թէ մի մեծ, բազմաթիւ մարդկանցով բեռնաւորուած մակոյկ, վեր ու վար տատանուելով, սրընթաց առաջ մղուելով, քարէ պատնէշին էր մօտենում։ Այժմ նա չաւրաչար կուռւմ էր ալիքների դէմ։ Առջեւի մասը վեր բարձրացաւ նման այն ծառայող ձիուն, որ փոքր է մնում մէջքի վրայ պառկի, — յետոյ կողքի վրայ շուռ եկած ու փրփրոտ ալիքներով պատած, մակոյկը՝ կարծես կատաղի ծովից յաղթուած, անդառնալի կորաւ։

Նաւուղիւններն առաջ գնացին մինչեւ նաւագործարանի պատնէշի եզրը, վառեցին փարփոց բերած մի քանի կանթեղներ ու լապտերներ եւ ձեռք առան ճանկաւոր ձողեր, չուանէ սանդուխներ ու հաստ պարաններ՝ առաջ մղուող նաւակը ճանկելու համար։ Լապտերներով լուսաւորուած ծովի մակերեւոյթի վրայ, ահագին օձի նման չալով, առաջ մղուեցաւ մի հրէշաւոր, պսպղուն ու փրփրակոխ ալիք, մէջքն առած մութ ուրուականներով

լցուած մի նաւակ: Այիքը՝ ասես թէ իւր վերջին ճիգը թափելով, այնպէս ուժգին առաջ նետեց ու զարկեց թեթեւ նաւակը պատնէշի կոփածոյ քարերին, որ նաւակի ցռուկը փշուրփշուր եղաւ, ու նաւակն սկսեց խորասուզուել: Բայց նոյն րոպէին նաւուղիւնները իրանց ճանկաւոր ձողերը ցցեցին նաւակի կողերին ու նորից առաջ վիժող ալիքի օգնութեամբ յաջողութեամբ հանեցին ամբարտակի վրայ: Նաւաստիներին մէկը միայն, մի լղար չոր ու ցամաք մարդ, որ դեկի մօտ կանգնած անհամբեր սպասում էր, որ ամէնից առաջ դամաք դուրս գայ, մակոյկի սաստիկ հարուածից ծովն ընկաւ: Թէ եւ իսկոյն եւեթ չուանի սանդուխք ձգեցին ողորմելուն, բայց նա չկարողացաւ ջրի երեսին մնալ ու դարձեալ խորասուզուեցաւ: Զօնը, առանց երկար բարակ մտածելու, շտապով բռնեց մի չուանի ծայրը ու քարէ պատնէշի ծայրից աներկիւղ ցած թռաւ գէպի խեղդուողը, բռնեց նրա օձիքից հենց այն րոպէին, երբ նա նորից խորասուզուելու վրայ էր, եւ նա ուղիղների ամուր քաշած պարանի օգնութեամբ ինքն իրեն ուղիղ պահեց, այնպէս որ երկուսն եւս աջողութեամբ ցամաք հանուեցան:

Ուրախութեան աղաղակներով բերին Զօնին նաւուղիւնների բնակարանը: Երբ նրան այդտեղ չոր ճերմակեղէն տուին, ու նա սկսեց շորերը փոխել, նաւաստիները նրա հերոսական քաջութեան համար իրենց ուրախութիւնը արտայայտելու չափ ու սահման չէին գտնում: Ամենայն մտերմութեամբ սեղմում էին նրանք Զօնի ձեռք, իսկ հրամանատարը նրա անունը առանձին նշանակեց, ազատարարի պարգեւ խոստանալով նրան:

Զօնը գնաց տուն: Ճանապարհին նոր յիշեց, թէ ճրքան իւր բարի մայրը, մի սգաւոր այրի, իւր համար անհանգիստ պիտի եղած լինէր, քանի որ ինքը ճաշից յետոյ մինչեւ այժմ տուն չէր վերադարձել: Նա շտապեցրեց քայլերը, մանաւանդ իրենց տունը քաղաքի մի հեռաւոր անկիւնումն էր, եւ ինքը դեռ քառորդ ժամի ճանապարհ ունէր կտրելու:

Սենեակը ներս մտնելով՝ տեսաւ իւր մօրը բազկաթոռի մէջ նստած, աղօթագիրքն առաջին, որ նա երկիւղածութեամբ կարդում էր: Մայրը գիրքը մի կողմը դրեց, ակնոցները հանեց ու Զօնի ձեռքը բռնելով, արցունքն աչքերին, սկսեց. «Որդեակ, որդեակ, այդպէսես պահում տուած խօսքդ: Երէկ չէր, որ ինձ

երդուելով հաւատացրիր, թէ շրջմոյիկութիւնը կրթողնես եւ ինքդ քեզ ուսման ու ինձ կրնուիրես, ինձ, քո թշուառ, սգաւոր մօրդ, ու հիմա վերադառնում ես — նա նայեց պատի հին ժամացոյցին — աւելի ուշ քան երբ եւ իցէ: Ահա շուտով ժամը ինն է: Զօն, ես ճաշից մինչեւ այժմ, այստեղ մէն մենակ նստած հոգսի մէջ եմ թէ արդեօք ո՞ւր մնաց իմ անսէր զաւակը: Դուրսն էլ այնպիսի եղանակ է, որ շանդ չես թողնիլ փողոց դուրս գայ: Զօն, Զօն, ի՞նչպէս ես կարողանում դու իմ սրտին այդքան ցաւ պատճառել:

Տղան, իւր մեղքը զգալով, լուռ կանգնած էր գլխակոր ու չէր համարձակոււմ վշտացած մօր երեսին նայել: Երբ մայրը հարցրեց թէ ո՞ւր էր այդքան ժամանակ, հազիւ միայն կարողացաւ նա եռանդով մօր ձեռները համբուրել ու խնդրել, որ այս անգամ էլ ներէ: Երբ մայրն իմացաւ որդուց նրա արարքը, ուրախութեամբ սեղմեց նրան իւր կրծքին, բայց յետոյ դառն լաց եղաւ, զգալով, որ որդին այդ վտանգին յաղթելով՝ աւելի մեծ վտանգից է պրծել. մօր արցունքներն աւելի առատացան, երբ նա լսեց, որ Միւլլերի նաւն էր վնասուածը: Նա ողբալով ձեռներն իրարու կցեց,

հաւատացնելով, որ իւր թշուառութիւնն այժմ անկասկած է, որովհետեւ իւր հանգուցեալ էրիկը Միւլլերին դեռ հարիւր դահեկան պարտ է, իսկ Միւլլերը առանց այն էլ քարասիրտ մարդ է:

Նստ չանցաւ, երկուսն եւս գիշերուան աղօթքն արին ու քուն մտան:

## 2. ՓԱԽՈՒՍ

Զօնի հայրը վերին աստիճանի փոթորկալից կեանքով ապրած մի մարդ էր: Նա առագաստ շինող էր եւ շատ էր ճանապարհորդել, մանաւանդ ծովերի վրայ, ուր նրա գլուխը բազմաթիւ արկածների ու վտանգների տակ էր ընկել: Թունիսցի ծովահների դէմ կռուելիս՝ նաւից պրծած մի փայտի կտոր նրա կողը ծանր վիրաւորեց: Այդ դժբաղդ դէպքը պատճառ եղաւ նրա վաղահաս մահուան: Նա հիւանդ վերադարձաւ Դանցիգ, եւ երկու տարուայ չափ հիւանդ պառկելուց յետոյ, հոգին աւանդեց իւր անմխիթար ամուսնու գրկում, թողնելով նրան իւր որդու — Զօնի հետ միասին շատ ու զորմեղի դրութեան մէջ: Այժմ ահա երկու

տարի անցած էր հօր մահուանից յետոյ. խեղճ  
այրին շատ աղքատ ու ողորմելի կերպով էր  
պահում իւր գլուխը: Բայց եւ այնպէս Ջօնը  
մի պնդակազմ պատանի դարձաւ, որի միակ  
երջանկութիւնն էր ծովի մտերքում թափա-  
ռել: Ամառը գրեթէ ամեն րոպէ, ուսումնարա-  
նից դուրս պրծնելուն պէս, ջրի մէջ էր լի-  
նում եւ իւր տասներկու տարեկան հասակում  
Դանցիգի նաւահանգստի մամենալաւ լուղորդն  
էր: Բայց այդ հանգամանքը մեծ ցաւ էր պատ-  
ճառում նրա մօր սրտին: Նա սիրտը դուրսը  
կատում էր իւր որդու հակումը դէպի այն  
արհեստը, որին իւր ամուսինը զօհ գնաց: Օր  
առուր պատմում էր նա որդուն ծովաշրջիկ  
կեանքի վտանգներն ու նեղութիւնները, մին-  
չեւ անգամ չափազանցում էր, իրենից հնարելով  
պմեն տեսակ սոսկալի բաներ, որոնք իբր թէ  
պատահած են ծովագնացներին, բայց հենց  
այդ կերպով եւս առաւել մղում էր որդուն  
դէպի այն վիճակը, որից նրան ուզում էր  
խրտնեցնել: Ջօնը կարծում էր թէ ժամանակ  
է քաջասրտութեան մէջ կրթուելու, որ նրա  
կարծիքով անհրաժեշտ պահանջ էր ծովագնաց  
մարդու համար:

Արդէն հանգուցեալ հօր մեծ հոգան էր

տղային ամեն տեսակ խիստ կեանքի վարժեց-  
նել: Բակում ձիւն եկած ժամանակ տղան պի-  
տի շորերը հանէր ու մերկ մարմնով ձիւնի  
մէջ թաւալգլոր լինէր: Հինգ ասրեկան հա-  
սակում հայրը նաւակի վրայից ծովը նետեց  
նրան. պէտք է լող տար, եթէ չէր ուզում խեղ-  
դուել: Զինորսի տղայքն էին նրա ընկերները:  
Շատ անգամ հայրը, հետն առած այդ տղա-  
ներին, առագաստաւոր նաւակով դուրս էր գա-  
լիս դէպի ծով: Այդտեղ տղայքը իրենց ճար-  
պիկութիւնը պիտի ցոյց տային՝ որսալով ջրի  
խորքը շարտած մի դրամ, եւ այդ դէպքե-  
րում մրցանակը տանողը սովորաբար Ջօնն էր  
լինում: Կատուի նման մագլցում էր նա կայմի  
ու պարանների վրայ, եւ փոթորկալից եղանա-  
կը, երբ ալիքները մակոյկի վրայ էին թափ-  
ւում, նրա սիրած բանն էր: Մանուկ հասա-  
կից սկսած՝ սովորութիւնը նրանից խել էր վախն  
ու երկիւղը: Նրա կեանքը գրեթէ երկակենցաղ  
անասունի կեանք էր, մանաւանդ քանի որ  
հայրը նաւահանգստի մօտ էր բնակւում, եւ  
նա ծովի ու նրա բնակիչների հետ այնպէս  
մտերիմ էր, ինչպէս հարուստների որդիքը  
տան շների ու կատունների հետ:

Դանցիգը նշանաւոր քաղաք է: Ջօնի աչ-

քի առաջ գրեթէ ամեն օր բացւում էր օտարազգի գոյնգոյն նաւերի իրարանցումը, եւ գրանց շնորհիւ նա ծանօթացաւ երկրագնդի ամեն տեսակ ազգութիւնների եւ նրանց վաճառահանուող մթերքների հետ: Նրա մատաղ հոգու մէջ ազգերի փոխադարձ յարաբերութեանց մի կենդանի պատկեր գոյացաւ:

Ջօնի մայրը շատ գթասիրտ կին էր, բայց շատ էլ հիւանդոտ էր խեղճը: Մեծ մասամբ անկողնում պառկած լինելով, իւր որդու կրթութեան համար շատ ջնջին էր նրա արածը, մանաւանդ երբ տղայի հայրը ճանապարհորդութեան մէջ էր լինում. այդ պատճառով տղան յանձնուած էր մի պառաւ հաւատարիմ աղախնի հսկողութեան, որի պատուէրներին հետզհետէ մեծացող չարաճճի տղան, քանի գնում, աւելի էր ընդդիմանում: Մօր ուղածն այն էր, որ Ջօնը ապագայում ուսուցիչ դառնայ:

Ութ տարեկան հասակում նոր սկսեց նա ուսումնարան երթալ, բայց մի առանձին յառաջադիմութիւն ցոյց չտուաւ: Ջօնը նստած էր այնպիսի աշակերտների կարգում, որոնց մտաւոր ընդունակութիւնը իրենիցը շատ ստոր էր, բայց նրան գիւր էր գալիս այդ, որով-

հետեւ այդտեղ նրա անելիքը շատ քիչ բան էր: Նրան հետաքրքրում էին միմիայն աշխարհագրութիւնը, բնական պատմութիւնը եւ ֆիզիքան. հաշուապահութեան մէջ էլ վատ չէր, իսկ միւս առարկաների համար նա ոչ սէր ունէր, ոչ եռանդ, եւ ատելով ատում էր լատիներէնը, որ իւր տասն տարեկան հասակում ստիպուած էր սովորել, որովհետեւ ծովագնացներից լսած ունէր, որ լատիներէնը մեռած լեզու է, եւ ժամանակակից ազգերից ոչ մէկը այդ լեզուով չէ խօսում: Բայց դրա հակառակ, նաւահանգստի մէջ միշտ թափառելու եւ օտար նաւերի փոքրաւորների ու նաւաստիների հետ մշտական յարաբերութիւն ունենալու պատճառով շատ շուտով հոլլանդական ու սնգլիական լեզուների մէջ բաւական յաջողութիւն ունեցաւ:

Ջօնի ազատած մարդը հենց ինքը պարոն Միւլլերն էր, հարուստ ածխավաճառը, որ տիկին Ջօնի հետ մինչեւ այժմ այնպէս նախատական կերպով էր վարուել: Նա ածխավաճառութեամբ ու ամեն տեսակ վաշխառութեամբ բաւական խոշոր հարստութիւն էր դիւղել, այնպէս որ երկու սեփական նաւ ունէր, որոնցից ամենանորի, այսինքն դժբաղդ Մա-

1002  
6028

ըիամի» վրայ ինքն էր նաւարկել: Բայց այդ նաւաբեկութիւնը նրան ոչինչ վնաս չպատճառեց. նաւը սպաւհոված էր, եւ ասում էին մինչեւ անգամ, թէ այդ նաւը նրան դեռ էլի 1500 թաւեր զուտ արգիւնք պիտի բերէր:

Պէպէտքերի այդ բերմունքի պատճառով նա հարկ համարեց իւր պատանի ազատչի տունը այցելութեան գնալ, ու գնաց մտաւ տիկին Զօնի աղքատիկ սենեակը: Խեղճ կինը աշխատեց մեծապատիւ հիւրին ձեռքիցն եկածին չափ սիրով ընդունել, եւ պարոն Միւլլերն այնքան ազնիւ գտնուեցաւ, որ իւր կեանքի ազատութեան պատճառով բաշխեց նրա հարիւր գուլդէն պարտքը եւ խոստացաւ նրա որդու վրայ առանձին խնամք տանել: Շատ ուրախացաւ սգաւոր մայրը Միւլլերի այդքան մեծահոգութեան ու բարութեան համար. բայց նոյն ուրախութիւնը չէր զգում Զօնը, որի սիրտը սաստիկ խռովեցաւ, տեսնելով որ ինքը պարտաւորում է այն մարդուն, որին նա իւր մանկութիւնից ատում էր:

Պարոն Միւլլերը կարգադրեց, որ տղան առեւտրական դպրոցը մտնէ: Դա մի ժամանակ Զօնի ամենամեծ ցանկութիւնն էր, բայց երբ տեսաւ, որ այդ ցանկութիւնը պարոն Միւլլերի

շնորհով է գլուխ գալիս, ինքն իրեն բոլորովին դժբաղդ համարեց եւ ամենեւին ուսումնարան երթալու ձգտում չունեցաւ: Ուսուցիչները շուտով նկատեցին նրա ծուլութիւնն ու անհաստատ, թեթեւամիտ բարքը. տեսան որ նա աւելի սւսումնարանից դուրսն է անց կացնում իւր կեանքը, քան ուսումնարանի մէջ, եւ գանգատուեցան նրա բարեբարին: Սա սկսեց նախատել անհոգ տղային, ապերախտ անուանելով նրան, եւ երբ նրա խօսքերն ու սպառնալիքները ոչինչ օգուտ չունեցան, նա ինքը ձեռք բարձրացրեց տղայի վրայ եւ իւր եղէգնի ձեռնափայտը նրա մէջքի վրայ կոտրատեց: Սակայն այդ չէր, ի հարկէ, յանդուգն տղայի յամառութիւնը սանձելու միջոցը: Զօնը այդ բանի վրայ այնքան կատաղեց, որ մտքումը դրեց, որ եթէ երկրորդ անգամ այդ կերպով պատժուի, իսկոյն եւեթ փախչի:

Բայց շատ չտեւեց, նորից պատժուելու պատճառը գտնուեցաւ:

Պանցիգի շրջակայքին յատուկ ընդարձակ ու կանաչկոտ մարգագետիններից մէկի վրայ մի օր երեք վայելչակազմ, նախշուն բծերով կովեր էին արածում լճակի ափի մօտ, ուր այնպէս խիտ խոտ ու եղէգներ էին բուսած, որ

անասունները երեքն եւս միւսները կուրծքերը ծածկուած էին: Մի փոքր հեռու, ափի արձակ տեղում, ծնագաջը նստած էին երեք պնդակազմ լուացարար կանայք, մուգ բրդէ շորերը հագներին, կարմիր լաթի գոգնոցները կապած, եւ լուանում էին սպիտակ կտաւէ ճերմակեղէն: Կովերի ամեն մի բայլ փոխելիս՝ խուլ հնչում էին նրանց վզից կարմիր փողպատով կախած պղնձէ զանգակները: Փոքր ինչ հեռու՝ երգի ձայն լսուեցաւ: Երեք տոփանները իսկոյն կանգ առան, ու լուացարարները հետաքրքրութեամբ իրենց շուրջը նայեցին. երեւաց մի կաթ ծախող աղջիկ, գիւղական հագուստով, շլինքը պղնձէ լծակ անց կացրած, որի երկու ծայրից կախուած էին պղնձէ դոյլեր, այնպէս փայլուն մաքրած, որ ոսկու պէս պսպղում էին: Լուացարարները բարձր ծիծաղեցին ու սխեցին նորեկին ծաղրել՝ թէ ինչ երկար ու ձիգ քնել է նա ու բարձի — թողի արել իւր կովին — «Նախ շունին», որ արդէն երեք անգամ նրա կարօտից բառանչել է: Բայց երբ կով կթողը ժրպտալով դարձաւ, որ տեսնէ իւր սիրած կովին, — ինչպէս սրտաճաք եղաւ նա — կովը չկար: Հենց այդ րոպէին թփերի միջից դուրս թռաւ մի երիտասարդ եւ այնպէս սարսափած վա-

զեց, որ եկաւ ու լուացարարների մէջտեղում գետին գլորուեցաւ: Լուացարարները, սկզբում վախեցած, մի սրտակտուր ճիչբարձրացրին, բայց երբ մարդուն ճանաչեցին, նրանց վախը թունդ ծիծաղի փոխուեցաւ: Մանաւանդ կաթ ծախող աղջիկը չէր կարողանում իրեն զսպել եւ, երեսը ծիծաղից կարմրած, մատով Լիզային էր ցոյց տալիս. սա էր, որ երիտասարդին այնքան վախեցրել էր ու հիմա, ուրախ-ուրախ տրտինգ տալով, ցառքտում էր նրա ետեւից. «Բնհ, երիտասարդ պարոն», կանչեց աղջիկը, «պարոն Օսվալդ, ինչ այդքան վախեցաք այս անասունից, հա, հա, հա. այդ հասակում, այն էլ զինուոր. ամօթ, ամօթ, — ութ ամսական մի հորթից, որ դեռ պոզեր անգամ չունի»:

— Աման, ի սէր Աստուծոյ, պարոն Օսվալդ, դուք մեր լուացքը կոխկռտեցիք, — գոռացին լուացարարները, յանկարծ ծիծաղը կտրելով, եւ բոլորը միասին ջանք արին լուացքի մէջտեղը մտած երկչոտ տղային հեռացնելու: Բայց որովհետեւ տղան անշարժ կանգնած էր իւր տեղում, կարծես կախարդուած իրեն հալածող Լիզայի տեսքից, որ սկսել էր արդէն իւր համար հանգիստ արածել, հաստաբազուկ լուացարարները ստիպուեցան ոյժ գործ դնել այդ

անկոյ հիւրին լուսացքի վրայից վռնտելու: Այդ-  
ի հարկէ հեշտ էր նրանց համար:

Վախից լեզապատառ եղած երիտասարդը,  
կապտագոյն, կարմիր աստառով նշանագետտը  
հագին, կարմիր եզրաւոր գինուորական գըլ-  
խարկով, հետեւակ զօրքի մի սպայ էր եւ հիւ-  
պատոս Բլիւսերի որդին: Նա հազիւ միայն,  
երբ տեսաւ կաթ ծախողը շոյում է իւր Նախ-  
շունին, սիրտ առաւ ու սկսեց հաւատացնել,  
թէ կովը յիրաւի կատաղաբար յարձակուեց  
իւր վրայ: Մինչ նորից ընդհանուր ծիծաղ էր  
բարձրացել, լուսցարարներից մէկը նկատեց,  
որ Նախշունը քարշ էր տալիս իւր ետեւից մի  
կարթի ձող, որի կարթը խոր ցցուած էր նրա  
պոչի միջից: Իսկոյն մի բարձր ծիծաղ էլ լսուե-  
ցաւ եղէգների միջից: Այդ արդէն չափազանց  
կասկածելի թուեցաւ ամենքին: Լուսցարար-  
ները վազ տուին դէպի եղէգները եւ ի՛նչ տես-  
նեն—Ջօնը թաք է կացել ու ծիծաղից չի կա-  
րողանում շունչ քաշել:

Նա էր, որ իւր կարթի ձողով կովին  
դուրս էր քշել եղէգների միջից ճիշտ այն բո-  
ւնէն, երբ Օսվալդը անցնում էր, ի հարկէ  
դիտմամբ, որ Օսվալդին վախեցնէ—որովհե-  
տեւ նրա վախկոտութիւնը դեռ եւս վաղուց՝ ու-

սումնարանից գիտէր, ուր նրանք ընկերներ էին  
— եւ սնաստունը, սարսափից կուրացած, կարթը  
պոչի վրայ, յարձակուեցաւ շիփ-շիտակ երի-  
տասարդ Բլիւսերի վրայ:

Երիտասարդ գինուորը գնաց գանգա-  
տուեցաւ իւր հօրը՝ հիւպատոսին, եւ սա իւր  
կողմից Ջօնի յանդգնութեան դէմ՝ բողոքեց  
առեւտրական դպրոցի վերատեսչին, որ Ջօնին  
սպառնաց յայտնել այդ դէպքը պարոն Միւլ-  
լերին:

Մի քանի օր անցած, պնդերես Ջօնը դա-  
սից փախած, օրօրում էր մի մակոյկի մէջ  
Վայքսել գետի երեսին: Իւր դասընկերներից  
մի քանիսը, մօտից անցնելիս, կանգ առան ու  
սպառնալով ձայն տուին թէ վաղը վերատեսչին  
կըսատմեն նրա արարմունքը: Ջօնը բարկացաւ,  
առաւ մակոյկի թիերից մէկը, ուժով զարկեց  
ջրին ու փառաւորապէս թրջեց ափին կանգ-  
նած դասընկերներին: Սրանք չուզեցին համ-  
բերութեամբ տանել այդ կատակը եւ սկսեցին  
աւազ ու խիճ շաղ տալ Ջօնի գլխին: Ջօնը  
մի բոպէում թռաւ դէպի ամբարտակը, զար-  
մանալի արագութեամբ վայր գլորեց տղանե-  
րից երեք փոքրերին եւ, բռնեցքը պինդ սեղ-  
մած, յարձակուեցաւ մեծի վրայ, որ իրենից

Հասակաւոր էր: Երկուսի մեջ սկսուեցաւ մի արիւնհահեղ մուշտէկութիւն, անգլխացի նաւաստիներէի ձեռով: Այդ տեսակ մուշտէկութիւն մէջ Զօնը վարժ վարպետ էր: Այնպէս թափով իջնում էին նրա հարուածները իւր հակառակորդի կրծքին ու գլխին, որ սա օրօրուեցաւ ու յանկարծ ուշաթափ վայր ընկաւ:

Հետեւեալ օրը Զօնը լաւ համարեց ուսումնարան չերթալ. նա գնաց դէպի նաւահանգիստը, ուր կարծում էր թէ նաւորդների խուռն բազմութեան մէջ հեշտութեամբ կարող է մոռացութեան տալ իրեն սպառնացող սպառնալիքը:

Նաւերից մէկը պարզում էր առագաստները, որովհետեւ պատրաստուում էր ծով դուրս գալ:

Զօնը պատահամբ յետ նայեց եւ — ո՛վ սարսափ — տեսաւ հեռուից պարոն Միւլլերին, որ մեծ-մեծ քայլելով դէպի պատուարն էր շտապում: Իսկոյն վճռեց փախչել: Զիշտ այդ րոպէին ափից բաժնուեցաւ մի փոքրիկ մակոյկ, որ չուող նաւին պիտի երթար: Առանց մի խօսք ասելու՝ Զօնը ներս թռաւ այդ մակոյկի մէջ: «Ի՞նչ ես ուզում, ա՛յ տղայ», հարցրեց զարմացած նաւաւարը: «Ձեզ հետ ծով դուրս

գալ», պատասխանեց տղան, «առ, տա՛ր ինձ նաւը»: Նաւաւարը մտաբերելով, որ իւր նաւապետը նաւի փոքրաւորի պէտք ունի, չընդգիմացաւ ու թիափարեց դէպի նաւը, որի վրայ Զօնը իսկոյն եւեթ կատուի ճարպիկութեամբ վեր մագլցեց: Նաւապետը նրա մագլցելու արագութիւնը տեսնելով, սիրով ընդունեց նրան: Նաւը նորվեգիայից եկած երկու — կայմա՛նի նաւ էր, որ ապրանքով բեռնաւորուած վերադառնում էր իւր տեղը: Յաջողակ քամին ուռեցրեց առագաստները, եւ նաւը սլացաւ դէպի ծով:

Զօնը կանգնած էր նաւի ծածկի վրայ եւ անթարթ աչքով յետ էր նայում դէպի ափը, որ հետզհետէ աներեւութանում էր: Նրա սիրտը սաստիկ ծանրացաւ ու աչքերը թաց եղան... Այճա՛մ միայն սկսեց նա մտածել իւր թեթեւամիտ արարմունքի մասին: Նա զգաց իւր մեծ սխալը: Շատ ուշ մտաբերեց նա այն վիշտը, որ իւր փախուստը պիտի պատճառէր իւր մօր սրտին, քանի որ ինքը նրա միակ զաւակն էր: Նա կարծես լսում էր մօր յուսակտուր աղաղակը՝ «ա՛հ այն վարձը, որ ստանում եմ սիրուս փոխարէն»: Գոնէ մի խօսք, մի հատիկ

խօսք խօսած լինէր մօր հետ. գոնէ մի հայեացքով մնաս բարեւ. տսած լինէր նրան — բայց արդէն ուշ էր:

### Յ. ՆՈՐՎԵՔԻԱ.

Զօնը առաջին գիշերը նաւի վրայ անց կացրեց ցրտից ու խոնաւութիւնից դողալով: Բայց առաւօտեան, մի փոքր ուշ, ինքն իրեն բոլորովին լաւ դգաց, եւ նրա սիրտն ու հոգին տանջող մռայլ մտքերը անհետացան: Քամին շատ յաջողակ էր, եւ նաւը թռչունի պէս արագ սլանում էր ջրի երեսին: Առաջ անցաւ նա Բորնհոլմի մօտով եւ երբ չորրորդ օրը բոցավառ արշալոյսը ծովի մակերեւոյթից վեր լողաց, նա արդէն Զունդի նեղուցումն էր, որ տեղից դէմ առ դէմ պէծին էին տալիս ծովի իշխան Կոպենհագէնի հաղար ու մի գոյներով վառուած տանիքներն ու գմբէթները: Շատ նաւեր, հակառակ քամուց արգելուած, դէպի Կատտեգատ էին դիմում, ինչպէս նաեւ Զօնի նաւը: Երկու հարիւրի չափ առագաստաւոր նաւեր կարելի էր համարել: Քանի առաջ էին գնում, այնքան առաւել զուար-

ճացնում էր նրան դիմացի փառահեղ տեսարանը: Նեղ կիրճը, արշալուսով լուսաւորուած ապառաժոտ ծովափը, ահաւոր Կրոնբուրգ բերդը իւր փարթամ ամրոցով, որ կարծես լողում էր ջրի մէջ, Հելլինգեօրի կարմիր տանիքները — այդ ամբողջ տեսարանը յափշտակում էր նրան: Իրիկուան դէմ նրանք մտան Հիւսիսային ծովը, եւ ահա նրանց աչքի առաջ ամպամած հորիզոնի վրայ դուրս լողաց Նորվեգիայի ծովափը: Սքանչելի տեսարան: Ողորկ ու կլոր ապառաժները ցիր ու ցան ընկած էին ահագին քարեղէն զանգուածներով, խոր ճեղքուածներով իրարուց բաժանուած, ու նրանց ետեւը բարձր ի գլուխ կանգնած էր ձիւնագագաթ սարերի շղթան: Օդի թափանցկութեան շնորհիւ աւելի սպարզ որոշում էին դիզուած, իրարու խոնուած լեռնակուտակները: Զօնը հիւանում էր եւ այդ վեհապանծ քաօսի դիմաց զարմանալի յուզուած էր զգում ինքն իրեն:

Ճանապարհը՝ Նորվեգիայի ծովափը բռնած՝ տանում էր դէպի Բերգէն: Առանց որ եւ իցէ ձախորդութեան՝ նաւը տեղ հասաւ: Հաղարաւոր հետաքրքիրներ ժողովուած էին նաւահանգիստը: Սրանց մէջ կար եւ մի կին՝ վեց տարեկան մի տղայի ձեռքից բռնած:

Հեռուից արդէն ճանաչել էր նա եկող նաւը. այդ նաւը բերում էր նրա սիրելի ամուսնուն, որ նաւի ղեկավարն էր եւ որ իսկոյն եւեթ գրկաբաց վազեց դէպի իւր կարօտալից կինը: Անգղուս պարագութեամբ առաջ անցաւ կինը դէպի նաւը ձգուած տախտակամածը, բայց փոքրիկ տղայի ոտքը սահեցաւ ու ջուրն ընկաւ. մայրն էլ ճշալով նրա ետեւից ընկաւ: Բայց մինչեւ մօրը կըլաջողէր իւր սիրելի զաւակին հասնել, Ջօնն էլ կայմի վրայից, ուր նա բարձրացել էր չորս կողմի տեսարանը լաւ դիտելու— թուաւ ծովն ընկաւ, բռնեց իւր գօրեղ աջ ձեռքով տղային, ձախ ձեռքով մօրը, եւ ամբոխի ուրախութեան աղաղակների տակ լողաց դէպի ափը:

Երկակայմ նաւի նաւապետն անսիրտ ու կոպիտ մարդ էր, որ ճանապարհին շատ ցաւկոտ ու անգութ էր ցոյց տուել ինքն իրեն: Ջօնը նրան չէր սիրում, թէեւ նրա կողմից ոչինչ դժգոհութեան չէր հանդիպել: Բայց շատ վատ էր նաւի միւս փոքրաւորի բանը, եւ Ջօնին առաջուց զգուշացրին թէ՛ շատ չի անցնիլ, նա էլ կ'ենթարկուի նաւապետի չարամիտ քմահաճութիւններին:

Մի օր հանդիպելով մի ուրիշ նաւի նա-

ւաստիներին, նրանցից տեղեկացաւ թէ իրենց նաւապետը Ջօնի նաւապետի հակապատկերն է, մի բարեսիրտ ու ճշմարտասէր մարդ է: Ջօնը իսկոյն եւեթ խնդրեց տանել իրեն նրա մօտ ու նրան զղջալով խոստովանուեցաւ Դանցիգից իւր փախչելու շարժառիթը, յայտնելով նրան միանգամայն թէ ինքը պատրաստ է ուրախութեամբ ծառայելու նրան: Նաւապետը մեծ յօժարութեամբ ընդունեց Ջօնի առաջարկը, նա մանաւանդ այն պատճառով, որ լսել էր տղայի անցեալ օրուայ քաջագործութեան համբաւը: Այլ եւ խոստացաւ ճանապարհ ընկնելուց առաջ տիկին Ջօնին նամակ գրել ու նրա սիրտը իւր փախտականի մասին, որքան կարելի էր, մխիթարել: Ջօնը ինքն իւր ձեռքով մի քանի տող աւելացրեց նամակի մէջ, որով նա իւր սիրտը բաւական թեթեւ զգաց: Մի քանի ժամից յետոյ նաւը ուղեւորուեցաւ դէպի Յէյլօն կղզին:

#### 4. ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԱՐՕՏԸ

Երկրագնդի ամենասիրուն կղզին, Յէյլօնը, դուրս լողաց ովկիանոսի միջից: Ամենից առաջ

հորիզոնի վրայ երեւացին, ամպերի նման, կղզու կապտագոյն սարերը: Գիշերուայ ընթացքում նաւն այնքան մօտեցաւ կղզուն, որ այստեղ, այնտեղ սկսեցին երեւիլ ցէյլօնցիների տները. ճրագները եւ ցամաքից փչող թեթեւ քամին պարտէզների համեմունքի անոյշ հոտը բերեց գէպի նաւը:—Ջօնը, ուրախութիւնից զմայլած, չէր կարողանում քնել: Նա մնաց նաւի ծածկի վրայ իբրեւ ընկեր գիշերապահ սպային: Վերջապէս լոյսը բացուեցաւ: Յամաքը, առաւօտեան մառախուղից փոքր առ փոքր աղատուելով, սկսեց երեւալ: Մի երկայն հրուանդան շատ խոր ներս էր մտած կապոյտ ծովի մէջ. նրա վրայ կանգնած էր մի զօրեղ ամբողջ: Այնուհետեւ հետաքրքիր աչքի առջեւ ներկայանում էր մեծ եւ մարդաշատ Կոլումբօ քաղաքը: Նաւահանգիստը վիստում էր նաւերով: Թնդանօթի սպայթիւնները ողջունեցին քաղաքին. ամրոցից նոյն պատասխանը եկաւ: Ուրախութեան բուռն աղաղակներ թնդացին նաւերի վրայից: Խարխիւրը նետուեցաւ ծովը, ուղեւորները հասել էին արդէն իրենց նպատակատեղին: Ծովեզրում խռնուած էին նաւաստիներ, ձկնորսներ, բեռնակիրներ, զինուորներ, նեգրներ, մալայացիք ու եւրոպացի վաճառական-

ներ. չինացիք անգամ կային իրենց տարօրինակ նաւերով: Քաղաքը մի խիտ ու խառն կուտակ էր հնդկական եւ եւրոպական տների, փառահեղ մինարէթների ու քրիստոնէական եկեղեցիների սրածայր աշտարակների, բաց ու մոռ գլանաչ ծառերով շրջապատուած, որոնք բարձրացնում էին իրենց գլուխը արեւելեան տափակ տանիքների մէջ թաքնուած ծաղկոցների միջից: Աւելի հրապուրիչ տեսք ունէին քաղաքի շրջակայքը: Իրարու կից, ընդարձակ սյգիների այն կողմում նշմարում էին վարսաւոր արմաւենիների ու սալոր-արմաւենիների մշտադալար բարձրաբուն անտառներ: Մի ցամաքային լճի մէջ ընկած էր մի կղզեակ, ուր կանգնած էին հարուստ քաղաքացիների շքեղ ամարանոցները: Ծովեզրի երկայնութեամբ շարուած էին տներ, որոնց ծաղկաղարդ պատըշգամքների վրայ Կոլումբոյի կանայք առաւօտեան զովութիւնն էին վայելում, եւ այդ տներին կից պարտէզներից օդի մէջ հեռու. թափանցում էին ծաղկափթիթ բոյսերի անուշահոտ բուրմունքը: «Աստուած իմ, որքան վայելչութիւն է շուայել Քո ձեռքը այս կղզուն», ասաց Ջօնը ինքն իրեն, մինչ կախարդուածի պէս անթարթ աչքով նայում էր գլխացի տեսարանին: «Այս

հարաւային երկնքի, այս արմաւենիների ու նռնենիների տեսքը, օդի մէջ ցնդուած այս անուշահոտ բուրմունքը, նաւերով լցուած այս բիւրեղանման վճիտ ծովը, գետի երեսին լողացող այն նաւակները, որոնց վրայ երգ ու երաժշտութիւն է հնչուում, այս բոլորից, իրաւ, նայելով չեմ յագեցնար: Դժոճար թէ սրանից աւելի սիրուն բան լինի երկրիս երեսին: Բայց եւ այնպէս, չգիտեմ ինչո՞ւ, այդ փարթամ տեսարանը իւր նորահրաշ գեղեցկութեամբ ինձ չէ գոհացնում: Հայրենիքս, իմ հայրենի Գերմանիան, իւր կաղնեայ ու մայրի անտառներով, չէ՞ որ նա էլ սիրո՞ւն է: Ի՞նչ է պակաս իմ Դանցիգին: Ա՛խ, երանի՜ թէ նորից տուն դառնայի, երթայի ամեն օրուայ պէս կանգնէի. քարէ պատնէշի վրայ, դառնայի դէպի թշուառ ու անօգնական մօրս խաղաղ սենեակը: Ա՛խ, մայր, մայր, ո՞րքան անարժան եմ քո սիրունս:

Սիրտը կտորած՝ յենուեցաւ նա նաւի եզրին, ու խաւար մտքեր պատեցին նրան: Յանկարծ մօտիկ նաւից կիթառի լարեր հնչուեցան: Ո՞րքան մեծ եղաւ նրա զարմանքը, երբ կիթառի ձայնի հետ խառն պատանեկան

գողտրիկ մի ձայն հասաւ ականջին, որ մի գերմանական երգ էր երգում:

Ջօնը կարծեց թէ երազումն է: Գերմաներէն երգ, — մի երգ, որ իրեն նման կարօտալից փափագ էր յայտնում Հիւսիսային ծովը տեսնելու: Նա տեսաւ պատանուն, կիթառը ձեռին նաւի վրայ կանգնած. նաւը մօտենում էր. Ջօնի սիրտը սկսեց աւելի թունդ բաբախել: Երանի՜ թէ կարողանար անկեղծ կարեկցութեամբ ու եղբայրաբար սեղմել դեռահաս երգչի ձեռքը եւ նորից լսել հայրենի սիրուն երգը, հեռաւոր Հիւսիսային ծովին նուիրուած մի ողջոյն. բայց այն նաւը հպարտ ու անտարբեր անցաւ մօտով եւ գնաց:

## 5. ՄՈԼՈՐՈՒՍԾԸ

Ջօնին բերող նաւը երկար միջոց կանգ առաւ այդտեղ: Ջօնը օգուտ քաղեց այդ դէպքից ծածուկ զթօսանքի երթալու, մանաւանդ որ երկինքն այնպէս մաքուր էր, օդն այնքան զովարար ու հրապուրիչ: Նախ եւ առաջ նա ոտը դրեց արմաւենու մի հոտաւէտ ծառաստանի մէջ: Մի պղպեղենու վրայ նա նկատեց

մի ոսկէ փասեան, առաւ մի քար ու նետեց նրան: Թռչունը թռաւ, Զօնը նրա ետեւից ընկաւ: Բայց երբ վերջապէս այդ անօգուտ որսից ձեռք քաշեց, սոսկալով նկատեց, որ ճանապարհը կորցրել է: Շուտով վեր մագլցեց մի բանանի ծառի գագաթը — որի ափսէի նման լայն տերեւների միջից կասկարմիր, կլոր պտուղները ժպտում էին նրան — ու չորս կողմը նայեց: Բայց ոչինչ չէր երեւում, բացի խոր ու անսահման անտառից: Նա վար իջաւ: Անտառի մէջ այնպէս խիտ աճած էին ամեն տեսակ պատատուկներ, որ Զօնը շատ տեղ շատ դժուարութեամբ ու մեծ ճիգ թափելով հազիւ կարողանում էր իրեն համար ճանապարհ բաց անել: Ծառերի վրայ կապիկները ահագին աղմուկ էին հանում եւ բացարձակ յայտնում էին իրենց դժգոհութիւնը: Յանկարծ նրա առջ դուրս եկաւ մի ահագին փիղ, ոկսեց լայն ականջները ճանճափանի նման թափ տալ ու կատաղաբար կնճիթը ձօճել: Մեր վախեցած խղճուկը չգիտէր ինչ անէր. հարկ եղաւ մի կերպ փախչել մի կողմի վրայ: Բայց ահա մութը կոխեց. անտառի խաւարը թանձրացաւ: Զօնը մի փոքր միջոց շուարած կանգնած մնաց տեղումը. բայց ահա նրա ետեւից ճայթիւններ լսուեցան: Նա-

ռաչելով կոտրատում էին ծառերի ճիւղերը, եւ նա նկատեց վայրենի փղերի մի մեծ երամակ, որ դէպի ինքն էր գալիս: Նա փախաւ, բայց ինքն էլ չգիտէր թէ ուր է գնում: Որքան հեռու էր փախչում, այնքան աճում էր նրա երկիւղը: Ուժասպառ եղած՝ վեր ելաւ մի ծառի վրայ. մի խումբ թռչուններ աղմկով թռան ծառի վրայից: Դրանք կարկաչող պապկաններ ու թռվիակներ էին: Այդտեղ, երկու եղանակեւ ճիւղերի մէջ նստած մնաց նա մինչեւ լուսնի ծագելը: Երբ լուսինը անտառի սոսկալի խաւարը փարատեց, մեր մոլորուածը պոկեց ծառի մի ճիւղ, վար իջաւ ու շարունակեց առաջ գնալ. բայց հետզհետէ աւելի մոլորուեցաւ: Լոյսը բացուեցաւ: Այժմ նրա առջեւ գտնւում էր մի լիճ, արձնի գոյնով ու անշարժ, որ արեւի վառ ճառագայթները քաշելով դէպի իւր անդունդը, այլ եւս չէր անդրադարձնում: Վառ կարմրագոյն ցեծեր, սպիտակ կտցարներ եւ բազմագոյն կռուող խաղբնակներ ճչալով ճախրում էին գետեզրեայ շուշանի մեծ թփերի վերեւում, որոնց ահագին տերեւները ծածկուած էին սեւ բժաւոր օձերով, որոնք կծիկի նման գալարուած, ոսկու եւ երենոսի փայլ էին արձակում: Հենց որ այդ-

Թուշուններից մէկն իւր որսը ճանգում էր, խսկոյն բարձրացնում էր իւր ճերմակ, զօրեղ թեւերը, վեր էր քաշում օձին, հակառակ նրա սաստիկ գալարուելուն, տանում էր լճի ափը ու կլանում: Մի ուրիշ տեղ կարմրավիզ բաղերի ամբողջ երամներ ափօսում էին լճի պողպատագոյն մակերեւոյթը: Երբեմն յանկարծ վեր էին թռչում նրանք, թողնելով իրենց ընկերներից մի քանիսին որ եւ է գիշատիչ կոկորդիլոսի կոկորդում, որ իւր ահաւոր գլուխը դուրս էր հանում ջրի միջից: Լճի շուրջը եօթն ոտնաչափ բարձրութեամբ բուսած էին եղէգն ու անձխոտ՝ մոյգ կարմիր ծաղիկներով: Ձարխոտի տեսակները խառնուելով այդ ջրաբոյսերի հետ՝ կազմում էին հըսկայական խոտերի մի լայն գօտի, որ հասնում էր մինչեւ անտառի մօտերը:

Ջօնը նորից վերադարձաւ անտառը եւ, այրող ծարաւից տանջուած, իւր կեանքի մասին մտածմունքի մէջ ընկղմած, տխուր նստեց մի գլորուած ծառի բունի վրայ: Տանը թողած անմխիթար մօր պատկերը դարձեալ կանգնեց նրա յուսակոտուր հոգու առաջ, եւ նա սկսեց լռիկ լաց լինել, դառն արցունք թափելով: Բայց ահա նրա ոտքերի տակ մի բան

թփրտաց— մի ահագին օձ դուրս սողաց ծառի արմատից ու նրա առջեւը գալարուեցաւ: Վտանգը նրան նոր ոյժ տուեց. նա վախաւ, բայց իւր դիմացը ամեն կողմից օձեր դուրս եկան ամեն գոյնի, մեծ ու փոքր, ու բոլորն էլ վազեցին իրենց որսի ետեւից: Չար չկար. նորից հարկ եղաւ մի ծառի վրայ բարձրանալ: Մօտեցաւ մի հացի ծառի, բայց ահա դարձեալ մի տարօրինակ շշուկ ստիպեց նրան վեր նայել: Մի խումբ երկայնաբազուկ, սեւամորթ գիրբօն—կապիկներ նստած էին ծառի վրայ եւ, կարծես, ծաղրում էին նրան: Երկար որոնելուց յետոյ գտաւ վերջապէս մի ազատ ծառ, որի ճիւղերի վրայ տեղաւորուեցաւ: Այդտեղ գիշերը վրայ հասաւ: Բայց նա չէր համարձակոււմ քնել, վախենալով որ մի գուցէ քնած ժամանակը վայր ընկնի: Այս էլ պէտք է աւելացնել, որ ցօղը նրան բոլորովին թրջել էր, եւ նա ցրտից դողում էր:

Միւս առաւօտը նա այնքան յոգնած էր, որքան երբէք իւր կեանքում չէր յոգնել: Բայց էլի շարունակեց առաջ գնալ: Նա հասաւ մի գետի ափ, ուր անասելի երջանկութեամբ յագեցրեց իւր տանջող ծարաւը: Փոքր ինչ կաղդուրուելով, նա որսեց գետի ընթացքին

հետեւել, յուսարով շուտով մի մարդաբնակ տեղ գտնել: Ափի խիտ մացառները ստիպեցին նրան մտնել ջուրը, որ տարուայ տաք եղանակի պատճառով պակասել էր: Գետը շատ խոր չէր թւում: Գետի մի նեղ տեղում խոտորնակի ձգուած էին ծառի բուններ, կարծես, մարդու ձեռքով իրար կողքի շարած, եւ կարծես մի բնական կամուրջ էին կազմում: անկասկած այդ կամուրջը տանում էր դէպի մարդկանց բնակարան. գուցէ դէպի հնդիկների մի գիւղ, կամ գուցէ տանում էր դէպի նաւահանգիստը: Յուսոյ մի աստղ փայլեց նրա յուսահատ հոգու մէջ: Նա փորձ արեց այդ կամուրջով գետի միւս կողմը անցնելու: Բայց որքան մեծ եղաւ զարմանքը, երբ նոր խելուն պէս ծառի բունը խրուեցաւ իւր ոտքի տակ ու անյայտացաւ: Զօնը հաւասարակշռութիւնը կորցնելով, մինչեւ կոկորդը թաղուեցաւ ջրի մէջ: Այն կանաչ գոյնի, փտած ծառի բունը, որի վրայ նա անդգուշութեամբ ոտք էր դրել, ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի ահագին կոկորդիլոսի կռնակը: Փոքր ինչ հեռու ջրի երեսին լողում էր մի գոմէշի գլուխ, որի մարմինից կուշտ կերել էր այդ հրէշը: Սոսկալով յետ թռաւ Զօնը դէպի ափը, բայց իւր շփո-

թութեան մէջ մի նոր զգուելի բանի վրայ ոտք կոխեց, դա ափսէի չափ մի ահագին դօդօշ էր, վառ կարմիր աչքերով, որ ցաւից կռափելով, լայն բաց էր արել երախը: Իսկ գետի միւս ափում նա նկատեց մի ընծառիւծ, որ եղէգների մէջ լուռ ու մունջ թաքնուած, սողացող կատուի նման, աչք էր պահում մի քանի բադերի, որոնք անհոգ լողում էին ջրի երեսին: Իսկոյն յետ փախաւ նա դէպի անտառ: Բայց այդտեղ այնքան յոգնածութիւն դգաց, որ մի կանաչազարդ թմբի վրայ փռուեցաւ ու քնեց: Յանկարծ զգաց նա քարերի հարուածներ: Զգոյնները կապիկներ էին, որոնք դիմացի ծառի վրայ կոկոսի ընկոյզները պոկում էին ու նրան զարկում եւ այդպէս իրենց չարաճճութեամբ մեր տղային մի համեղ կերակուր էին տալիս: Զօնը ագահաբար փխեց ուտել այդ քաղցրահամ պտուղների զովարար միջուկը: Երեկոն մօտենում էր: Յերեկուայ տօթը նրան սաստիկ գլխացաւ էր պատճառել, եւ նա վախենում էր՝ մի գուցէ տենդ ստանայ: Այլ եւ սրունքների մէջ զգում էր ուր խայթոցներ: Նա քաշեց իւր նաւաստիի լայն վարտիքը եւ մեծ զարմանքով նկատեց, որ իւր ոտքերը ծածկուած էին տղրուկներով:

որոնք իւր քնած ժամանակ ծծել էին իւր ա-  
րիւնը: Թէ եւ նրանք հեշտութեամբ վայր ըն-  
կան, բայց արի տես, որ նրանց խայթերից ա-  
ռաջ եկած խոցերից այնպէս առատ արիւն էր  
վազում, որ տղայի շորերը արիւնով ներկուել  
էին: Մինչ նա ինչպէս լինի՝ մի կերպ լուա-  
նում էր արիւնը կոկոսի զովարար հիթով,  
մի նոր փորձանք եկաւ նրա գլուխը, որովհե-  
տեւ յանկարծ չղջիկների մի ահագին բազմու-  
թիւն այնպէս խիտ առ խիտ սկսեցին պտտել  
նրա շուրջը, որ ամպի նման ծածկեցին մթնո-  
լորտը: Այդ գարշելի մորթեմաշկ թեւաւոր-  
ներն այնքան յանդուգն էին, որ Զօնը հազիւ  
կարողանում էր նրանց իրենից հեռու պահել,  
անդադար պտտեցնելով օդի մէջ իւր հաստ  
լախոր: Վերջապէս հազիւ հազ անտառի խոր-  
քումը միայն կորան, գնացին այդ ձանձրալի  
հիւրերը: Այժմ նա ժողովեց լիանոսի բազեղ-  
ներ ու վեր ելաւ մի ռետինի ծառի վրայ, որի  
ճիւղերից ինքն իրեն ամուր կապեց: Բայց այս  
գիշերը նոյնքան անտանելի եղաւ, որքան եւ  
առաջին գիշերը, վայրենի գաղանների ոռնոցը,  
գիշերուան ցուրտ օդը, սառն ցօղը չթողին  
նրան քնելու մինչեւ լուսադէմը:

Արեւն արդէն բաւական բարձրացել էր,

երբ ուժասպառ խեղճ տղան ծառից վար իջաւ:  
Իւր մոլեշրջիկ թափառումը սկսելուց առաջ՝ նա  
ջարդեց երէկուանից մնացած կոկոսի ընկոյզ-  
ները, խմեց փեճեկների զովարար կաթը առա-  
ւօտեան ըմպելիքի տեղ ու միջուկը դրեց ջերը:  
Որովհետեւ անտառը, քանի գնում, թարձրա-  
նում էր, այդ պատճառով նա փորձ փորձեց  
նորից դէպի գետը վերադառնալ, որպէս զի  
ափը բռնած երթայ: Նախապարհին հանդիպե-  
ցաւ նա երեք փղերի, երկուսը ծեր, երրորդը  
դեռահաս, որոնք արածում էին մեծ պտղա-  
ւէտ ծառերի շուաքի տակ: Փոքր փիղը տեսաւ  
նրան, վազեց դէպի միւսները, կարծես, նրանց  
իմաց տալու, ու յետոյ դարձաւ ուղղակի Զօնի  
վրայ վազեց: Սա փախաւ՝ յուսալով մի ծառ  
գտնել, վրան իւր կեանքը ազատելու, բայց ծա-  
ռերից ոչ մէկի ճիւղերը այնքան ցած չէին,  
որ կարողանար բռնել: Բացի այդ, իւր չար  
բաղդից, ոտը սահեց ու վայր ընկաւ իւր  
հալածողից քիչ հեռու, որ խկոյն վրայ հա-  
սաւ: Անասունը խորդալու նման մի ձայն հա-  
նեց, հոտոտեց վայր ընկածին, բռնեց իւր կրն-  
ճիթով նրա թեւից ու ոտքի կանգնեցրեց: Զօնը  
հենց այն էր սպասում, որ այդ անձուռնի աղ-  
բ արը հանաքներից ձանձրանալով իրեն կ'առ-

նի, օգի մէջ կըշարտի եւ ընկողի պէս ջարդու փշուր կ'անի: Քանի որ միւս երկու մեծ փղերը ամենեւին ցանկութիւն չէին յայտնում իրենց բոթոթի կատակներին մասնակցելու ու շարունակում էին հանգիստ արածել, Զօնը մի յանդուգն վճիռ կայացրեց իւր մտքում ու իւր բոլոր ուժով գոռաց փղի վրայ: Փիղը զարմացած մնաց, ինքն իրեն մի բան միթմըրթաց ու բաց թողեց Զօնին, որ իսկոյն մի կոկոսի արմաւենու վրայ բարձրացաւ:

Որովհետեւ նա փախչելու ժամանակ, աւելի թեթեւ վազելու համար, դէն էր ձգել իւր բաճկանը կոկոսի միջուկների հետ իմիասին, ուստի դարձեալ գետնի վրայից ժողովելով այդ պտուղներից, շարունակեց իւր թափառումը: Նա հասաւ մի նեղ կածանի: Նորոգուած յուսով սկսեց առաջ գնալ այդ ճանապարհով, բայց շատ չանցաւ, նրա ոտքը դիպաւ մի սպիտակ մարդու գիակի, որ, երեւի, զոհ էր գնացել նոյնալիսի մոլորութեան, ինչպէս եւ ինքը: Զօնը հանեց նրա կօշիկները, որոնք յարմար եկան իւր ոտքերին, եւ մեծ եղաւ նրա ուրախութիւնը մանաւանդ այն պատճառով, որ նա գտաւ այդտեղ ջամբոյի ծառեր իրենց համեղ պտուղներով ծանրաբեռնուած: Այդ պտուղները

խնձորինման են, մէջը լիքը շագանակի նման կորիզներով: Նոր կենդանութիւն առնելով՝ նոր էր սկսել իւր ճանապարհը շարունակել, յանկարծ մի կողմից անտառի միջով մի բան փայլեց: Փոքր ինչ յետոյ պարզուեցաւ, որ այդ փայլը գալիս էր բարձր ծառերի մէջ թաքնուած մի առուակից: Զրի մէջ մի բան բարձրացաւ ու տնկուեցաւ: Զօնը կանգ առաւ, վախենալով նոր վտանգի հանդիպել, ու զգուշութեամբ սկսեց չորս կողմը նայել: Յանկարծ շներ հաջեցին: Հեռոցհեռէ հաջողը սկսեց մօտենալ, եւ մի ահագին վարաղ, առուից դուրս գալով, ուղղակի Զօնի վրայ վազեց: Սա շուտով ցատկեց կատաղի գազանի դէմ, աջ ծնդով չօքեց կակուղ մամուռի վրայ եւ իւր հաստ փայտը դէմը բռնեց, վայրենի գազանին մի կերպ դէմ դնելու համար: Որքան արագ էր նրա այդ շարժումը, բայց եւ աւելի արագութեամբ ողնչացաւ այդ պաշտպանողական հնարը: Փայտը սահեց գազանի խէժոտ կրծքից եւ, փախանակ վրայից թռչելու, կատաղի գազանը մեր երիտասարդ քաջին բոլորովին թաւալգոր արեց: Զօնը մէջքի վրայ վայր ընկաւ եւ գազանը իսկոյն վրան ընկաւ ու խրեց նրա մարմնի մէջ իւր սոսկալի ժանիքը: Հենց այդ

րոպէին անգլիական ցեղի երկու ահագին խող-  
խեղդ շներ կատաղաբար յարձակուեցան խողի  
գլխի վրայ ու իրենց սուր ակռաները մխեցին  
նրա ականջների մէջ: Վարազը սարսափելի  
խորդաց, բայց շները այնպէս ամուր խածել  
էին, որ խողը մնաց անշարժ, գլուխը բարձր  
բռնած: Երբեմն միայն, անզօր կատաղութիւ-  
նից, նրա ժանիքները իրար էին զարկում,  
կարծես, ցոյց տալու համար, որ նրա կատաղու-  
թիւնը դեռ եւս յաղթում էր ցաւին: Ուրիշ  
շներ վրայ հասան ու բռնեցին գազանի ետի  
ոտքերը, այնպէս որ նա տեղնուտեղը անշարժ  
մնաց: Մինչ այն՝ որսորդներն էլ վրայ հասան:  
Դրանք անգլիացիք էին, Զօնի նաւորդակից-  
ները, որոնք Զօնին փնտռելու համար մտել էին  
անտառը: Նրանք գտան խեղճ տղային ուշա-  
թափ, արիւնաշաղախ ու ցեխաթաթախ, գետ-  
նին տարածուած:

## 6. ԾՈՎԱՅԻՆ ԱԻԱԶՍԿՆԵՐ

Երբ Զօնը աչքը բաց արեց, տեսաւ որ ինքը  
իւր խցի մէջ ճօճի վրայ պառկած էր: Նաւի  
փոքրիկ պատուհանների միջով թափանցում

էր արշալոյսը: Նաւաստիները վերելում աղմը-  
կով իրենց գործն էին կատարում: Ծանօթ  
ձայները նրան երազ թուեցան: Վերջապէս իւր  
խցիկի դռան ետեւից նա մի շշնջոց լսեց: Նա-  
ւաստիներից մէկը ներս մտաւ, դրեց նրա առ-  
ջեւը նաւաստու հագուստ եւ նշաններով հաս-  
կացրեց, որ հագնուի ու վերել գնայ: Հենց  
որ Զօնը նաւի տախտակամածի վրայ դուրս  
եկաւ, նաւաստիները նրան մեծ հետաքրքրու-  
թեամբ ընդունեցին եւ խորհուրդ տուին նրան  
անմիջապէս գնալ նաւապետի խոցը եւ առան-  
ձին ներողութիւն խնդրել նաւապետից իւր  
փախստական զբօսանքի համար թէպէտ եւ այդ-  
զբօսանքը շատ տխուր հետեւանք էր ունեցե-  
յաւ համար: Այդպէս էլ արեց: Նաւապետը,  
բարեսիրտ մարդ լինելով, խաղաղութեամբ բանը  
վերջացրեց: Ուռանց այն էլ Զօնը բաւական  
պատիժ կրել էր իւր արարմունքի համար:

Այդ ժամանակամիջոցում անգլիական նա-  
ւերի մի մեծ նաւատորմից էր գումարուել ծո-  
վախորշում: Այլ եւս երկիւղ չկար ֆրանսիա-  
ցիների յարձակումից, ուստի անգլիացիք ու-  
րախ-ուրախ վեր հանեցին խարխալները, որ  
հայրենիք վերադառնան: Զօնը ամենքի համար  
սիրելի էր դարձել եւ նաւապետն առանձին

շնորհ անելով նրան, յանձնել էր նրան ղեկավարին, որնա ղեկավարելու արհեստի մէջ վարժուի, եւ այդ բանի մէջ Զօնը մեծ առաջադիմութիւն էր արել:

Նաւորդութեան չորրորդ օրը, առաւօտը ծանրաչափը յանկարծ բաւական վայր իջաւ: Քամին դադարեց եւ մի ճնշող տօթ տիրեց շուրջը: Ամեն տեսակ ծովային գազաններ ջրի խորքից դուրս ելան ու սկսեցին նաւի չորս կողմը խռնուել: Մի ահագին կէտ ձուկն նետի պէս վեր լողաց ու շառագելով սկսեց խաղաղ ջուրը հերձել, — այդ բոլորը մօտեցող փոթորկի սպառնալից նշաններն էին: Առաջաստները ծալեցին, բացի կայմի մօտ եղած ներքեւի առագաստից: Նաւաստիներն անհամբեր սպասում էին նաւապետի հրամաններին: Գիշերը վրայ հասաւ: Նաւաստիների կէս մասը ուղարկուեցաւ նաւայարկի տակ հանգստանալու: Մեր Զօնն էլ գնաց մօտաւ իւր ճօճը: Ժամը տասներկուսին մօտնա նորից վեր ելաւ նաւայարկը: Նա գտաւ նաւապետին ղեկավարի մօտ, որոնք երկուսն էլ անդադար երկինքն էին դիտում: Գիշերն ամպոտ էր: Լուսինը լողում էր ամպերի մէջ, եւ նրա լոյսը երբեմն բարակ շերտերով ընկնում էր ա-

լիքների վրայ, որոնք հեռուից ճրագի նման փայլում էին:

Ալիքների երկայն շերտերի մէջ ցոլանում էին գոյնգոյն ծովային փայլեր, որոնք շատ սիրուն տեսք էին առնում գիշերուան խաւարի մէջ: Բայց ահա յանկարծ նաւայարկի մի մասը մի տարօրինակ փայլով լուսաւորուեց: Նաւաստիների աչքերը դարձան դէպի այդ շողքը եւ ի՞նչ տեսնեն — մեծ կայմի վերի ծայրում վառւում է մի բաւական մեծ, լուսափայլ բոց: Նաւաստիները գունաթափ եղան: Նրանք իրենց կոյր սնոտիապաշտութեամբ ընդունեցին այն իբրեւ չարագուշակ մի նշան: Բայց նաւապետը հրամայեց Զօնին վեր մագըլցել ու հանել հողմացոյցը, որի վրայ վառւում էր բոցը: Այն միջոցին, երբ Զօնը կայմի ծայրին կպած էր, բոցը նրան ճիւղաղական տեսք էր տալիս: Լոյսը, կարծես, թռչկոտում էր նրա ձգած ձեռքի առաջ եւ սոսկալի կերպով փայլիւում էր այն ահաւոր բարձրութեան վրայ կախուած տղայի մեռելագոյն դէմքի վրայ: Զուր էր ջանք անում Զօնը հողմացոյցը հանելու, բայց նաւապետը հրամայեց նրան ցած գալ:

Քառորդ ժամի չափ տեւեց այդ ելեք-

տրական երեւոյթը, որին ասում են սուրբ  
Ելմսի կրակ—ու յետոյ մարեցաւ: Նաւաստի-  
ները շունչ առան: Բայց դեռ էլի քամի չկար:  
Բայց եւ այնպէս ալիքները ըռպէից ըռպէ ա-  
ւելի բարձրանում էին: ձերմակ փրփուրը ծած-  
կեց յուզուած ծովի երեսը: Ծովային թռչուն-  
ների երամներ եկան նաւի վրայ պատսպա-  
րուելու: Օդի վարի ծաւրերը ահաբեկ հան-  
դարտութիւն էին պահպանում: Լսւում էր  
միմիայն յուզուած տարրի զօրեղ շառաչիւնը:  
Նաւը ճռնչալով թաւալում էր շառաչող ջրե-  
ղէն սարերի մի գագաթից միւսը: Մի թունդ  
որոտմունք անցաւ ուկիանոսի վրայով: Աղմուկը  
սաստկանալով սարսափելի գոռում գոռումի  
փոխուեցաւ, եւ ահա փոթորիկն անսանձ կա-  
տաղութեամբ փրթաւ օրօրուող նաւի գլուխը  
եւ այնպէս թունդ, որ ամենքը, կարծես, մահն  
աչքով տեսան:

Առաւօտեան դէմ միայն հանդարտուեց  
փոթորիկը, բայց դեռ վիթխարի ալիքներ ծփում  
էին այս ու այն կողմը եւ շառաչուն փրփու-  
րով ծածկում էին նաւը: Տարօրինակ կերպա-  
րանք էին առել նաւաստիները: Նրանց մա-  
ղբերը, յօնքերն ու թերթերունքները, կարծես, ե-  
ղեամբով ծածկուած լինէին: Երեսներն ու ձեռ-

ները, կարծես, ալրոտ լինէին. նաւն անգամ իւր  
կայմերով ու պարաններով ի միասին, ծովի ջրի  
հարուածներից, ծածկուել էր սպիտակ աղի  
շերտով: Մարդկանց աչքերը ցաւում էին դրա-  
նից: Աչքի մէջ թափանցող աղահատիկները  
արցունք էին խլում այնպիսի աչքերից, որոնց  
մէջ արցունքի աղբիւրը վաղուց ցամաքել էր:

Սակայն շատ չանցաւ, ծովը բոլորովին  
կորցրեց իւր սարսափը: Նրա հարթ մակերե-  
ւոյթը այնպէս հանդարտ էր, որ բաց մակոյ-  
կով կարելի էր վրան նաւարկել: Երկինքը, ծովն  
ու օդը նորից կռեցին իրենց համաձայնու-  
թեան վաղուցուան դաշինքը: Զօնը դուրս էր  
եկել նաւի ներսից ու նստել էր ղեկի մօտ ի-  
րեն յատուկ փոքրիկ տեղում, այսինքն նաւի  
պատին կպցրած այն փոքրիկ տախտակի վրայ,  
որի վրայ ամրացւում են կայմի պահող պա-  
րանները: Սյդտեղ, նաւաստիների աղմուկից  
հեռու նստած, ձուկն էր որոնում նա լուիկ  
մնջիկ, ուշ ու միտքը իւր սիրելի Դանցի-  
գին նուիրած: Նրան թւում էր թէ ալիքի ա-  
մեն մի բաղխումը մի ողջոյն է բերում իրեն  
իւր հայրենիքից, թէ այն ալիքների հայելու մէջ  
ցոլանում է իւր մօր պատկերը եւ, կարծես,  
նրանց շշուկի միջով իւր մօր լացի ձայնն էր

լսում: Զօնի սրտի մէջ, կարծես, դանակ էր  
ցցուած: Բայց ահա իւր ետեւում նաւաստի-  
ների ձայնը բարձրացաւ: Նրանք ասես թէ ի-  
րարու ցոյց էին տալիս հեռուն՝ ծովի վրայ մի  
կէտ: Նաւապետի ձայնն էլ լսուեցաւ. իրեն  
էին կանչում: Նա պիտի վեր ելնէր կայմի ծայրը  
եւ դիտէր նաւաստիների ցոյց տուած կէտը:  
Նրան իւր տեսածը ամպի նման մի բան թուե-  
ցաւ, բայց շուտով յայտնի եղաւ, որ այդ ամպ  
կարծուածը մի նաւ է, այն էլ թշնամի պա-  
տերազմական մի նաւ, որ մեծ արագութեամբ  
արդէն բազմաթիւ առագաստներ էր պարզել:  
Նաւապետը նկատեց, որ այդ նաւի առագաստ-  
ները թուով աւելի շատ են քան իրենինը եւ  
փախչելու մի կարճատեւ փորձից յետոյ, վճռեց  
դէմ դնել այդ յարձակուող նաւին: Այդ օտար  
նաւը փրանսիական դրօշ էր կրում: Իսկոյն  
եւեթ պարզուեցաւ անգլիական յաղթական դր-  
օշը, եւ պաշտպանութեան կարեւոր պատ-  
րաստութիւնները տեսնուեցան: Թնդանօթները  
լցրին, գնտակներսլ ու վառօդով լի արկղներ  
շարուեցան նրանց մօտ: Նաւաստիները իրենց  
վրայի աւելորդ շորերը դէն ձգեցին, գլուխ-  
ները փաթաթեցին բրդէ թաշկինակով, շապկի  
թեւերը վեր քաշեցին, լցրած ատրճանակներ

գօտիները խրեցին, եւ դաշոյնները պատեանի մէջ  
թուլացրին, մինչդեռ միւսները բազմաթիւ զէն-  
քեր էին շարում մեծ կայմի շուրջը: Մակու-  
կալիւսներից մէկը, մի յաղթանդամ մարդ,  
զինուաւ՝ իր կէտ որսալու եռութանիք եղանով:

Մինչ այս՝ մինչ այն, աւազակների նաւը  
հրաձգութեան ասպարիզի չափ մօտեցել էր:  
Թշնամիների թնդանօթներից մինը որոտաց:  
Դա մի նշան էր, որով դիմացի նաւը պահան-  
ջում էր Զօնի նաւից, որ սա իւր դրօշը վայր  
իջեցնէ: Կրովհետեւ այդ պահանջը չկատա-  
րուեցաւ, յարձակուող նաւը աւելի մօտեցաւ եւ  
յանկարճ ծովին ու բոցը պատեց ամեն բան:  
Մի սուլոց ու ճայթոց ընկաւ անգլիական  
նաւի առագաստների մէջ: Իսկոյն եւեթ թըն-  
դացին այն կողմի թնդանօթները: Զօնը գո-  
ղաց: Նոյն րոպէին որոտաց իւր նաւապետի  
ահարկու ձայնը՝ «Կրակեցէք, տղերք», եւ մի  
զարկով դուրս թռան գնտակները անգլիական  
հրազենքերի խողովակներից: Կրկին անգամ  
որոտացին երկու նաւերի թնդանօթները: Կայ-  
մերի ու ձողերի կտորները թռան օդի մէջ.  
պատերը ճռնչացին: Ծուխը պատել էր ամեն  
բան: Բայց ահա երկաթէ ճանկեր ընկան Զօնի  
նաւի վրայ. նաւերը կպան իրարու, քսանի չափ

աներկիւղ տղերք նաւի եզրից դուրս թռան: Մի զօրեղ, միանուագ հրձիգ դիմաւորեց ճանկողներին, եւ վագրի կատաղութեամբ յարձակուեցան իրարու վրայ երկու նաւապետները: Սրերը շառաչեցին, կացինները զարկուեցան, ատրճանակներ ճայթեցին, անէծք ու հառաչանք իրարու խառնուեցան: Կարճատեւ էր կոտորածը, բայց անգլիացի նաւաստիներից աւելի քան կէսը սպանուած ընկան տախտակամածի վրայ: Նաւապետն էլ իւր հերոսութեան զոհ գնաց:

Բայց ահա նորից պայթեցին փրանսիական թնդանօթները. նոր դժբաղդութիւն: Ճիշտ Զօնի կողքին կոտորուեցաւ առջեւի կայմը եւ ընկնելով մեծ կայմի առագաստի ձողի վըրայ, դուրս խլեց նրան եւ երկուսն ի միասին իրենց թոկերով ու առագաստներով կործանուեցան ու ընկան ծովը—Զօնն էլ նրանց հետ: Ծովի ալիքը թաղեց նրան իւր տակ, եւ նա ջրի տակը գնաց:

Բայց որովհետեւ նա լաւ լուղորդ էր, իսկոյն եւեթ ջրի երեսն ելաւ, բռնեց չուանէ սանդուղքը ու նաւի վրայ մագլցեց: Բայց այդ նաւը թշնամու նաւն էր: Նոյն նաւի վրա փրկեցին իրենց կեանքը եւ Զօնի թշուառ ընչ

կիրները: Դրանք ամենքը, քանի որ անգլիական նաւը արդէն կայմագուրկ մի աւերակ էր դարձել, անպայման անձնատուր եղան փրանսիացիներին: Բայց նրանք դեռ աւելի խիստ մարդկանց ձեռք պիտի ընկնէին:

Յարձակուողները ուղղեցին իրենց նաւը դէպի Իւրը-Փրանս կղզին: Ճանապարհին նաւը փոթորկի բռնուեցաւ, յետոյ մի հոլանդացի պատերազմական նաւի յարձակման ենթարկուեցաւ եւ կարճատեւ ընդդիմութիւնից յետոյ քարշ գալով տարուեցաւ Տաֆել—բայ ծովածոցը: Այդտեղ Զօնը իւր ուղեկիցների հետ ի միասին ցամաք հանուեցաւ ու բանդարկուեցաւ:

## 7. ԲԱՆԻԸ

Դա մի հին, երեք-յարկանի շէնք էր, ծովափի սեպացած ժայռի գագաթին ցցուած, այնպէս որ ժայռի երեսն ու շէնքի ետեւի պատը միասին մի ուղղահայեաց մակերևոյթ էին կազմում: Այդտեղ ահա բերուեցաւ Զօնը իւր նաւի երկու նաւաստիների հետ միասին,

Հողանդացի մի պաշնորդի ուղեկցութեամբ, երեկոյեան, երբ արդէն մութը կոխել էր: Այդ ընկերներից մէկը Մօռ անունով մի Շոտլանդացի էր. իսկ միւսը, Կոնրադը, Պոմերանցի: Գնանք մենք էլ նրանց հետ եւ մասնակից լինինք այդ խեղճերի դառն վիճակին, սկսած այն րոպէից, երբ բանդի բարձր դուռը նրանց վրայ փակուեցաւ, ու նրանք ներս մտան մի երկայն ու մութ սրահ: Երկու սանդուղք բարձրանալուց յետոյ մտան նրանք մի գմբեթաձեւ սենեակ, որի մէջտեղը մի հին սեղան էր դրուած. այդ սեղանի վրայ պաշնորդը դրեց մի աղօտ լսալտեր: Սենեակի մի անկիւնում փռած էր մի խուրձ յարդ, այդ խուրձը ցոյց տալով պաշնորդն ասաց՝ «ահա ձեր անկողինը. դէհ, հանգիստ կացէք»: Ասաց ու լսալտերն առաւ դուրս ելաւ եւ իւր ետեւից դուռը կողպեց ծանր փականքով: — «Թճ՛հ», կանչեց Շոտլանդացին, «այս ի՞նչ շան կեանք է. այսպէս փակուել, վանդակը կոխած թռչունի նման. շանթ ու կայծակ. աւելի լաւ չէ՞ փոթորկի ու մրրիկի մէջտեղը կանգնել, որ ծովի աղի ջուրը բերանդ լցուի, քան այս տախտակների վրայ պառկել»: ասաց ու ոտքը այնպէս թափով գետնին գտրկեց, որ սենեակը թնդաց:

«Մէկ էլ այս խոնաւութեան ու բորբոսի հոտը», կանչեց Պոմերանցի Կոնրադը ու թքեց: Զօնը դեռ եւս լուռ էր: Նա տեղիք ունէր իւր մոքերի մէջ խորասուզուելու: Այդ բանդարկութիւնը նրան թւում էր իբրեւ արժանի պատիժ իւր թեթեամտութեան, որ նրան մղեց աշխարհէ աշխարհ թափառելու եւ իւր խղճուկ մօրը անհնազանդ գտնուելու: «Քո հսկին է», ասում էր նրան իւր ներքին ձայնը: «Միտքդ առ այն կսկիծը, որ դու քո մօրը պատճառեցիր, ու ապաշխարիր»: Աչքի մէջ սեղմած բիւրեղի նման արցունքը վկայ էր նրա ներքին, հոգեկան տանջանքին: Նա սկսեց հեկեկալ:

Կոնրադը լսեց, արմունկով հրեց իւր ընկեր Մօռին ու ասաց. «Մօռ, արեւս վկայ, այն տղան լաց է լինում: Գիտեմ, նա էլ խեղճը ուրախ կըլինէր ծովի օդը շնչելու, քան այս ծակի մէջ խրուած մնալու: Պատուական տղայ է մեր Զօնը». ասաց ու գնաց դէպի Զօնը ու սրտանց ձեռքը մեկնեց նրան: «Լացը թո՛ղ, տղաս», շարունակեց նա, «խելքդ ժողովիր: Փոխանակ վնգւնգալու, արի այդ սուր աչքերովդ մի քունջ ու պուճախը նայիր, չե՞ս

կարող մի տեղ մի ձեռք գտնել, որ մկան նը-  
ման դուրս սողանք»:

Երեքն եւս մօտեցան պատուհանին ու պա-  
տառեցին վանդակի վրայի սարդի թանձր  
ոստայնը: Լուսնի լոյսը աւելի պայծառ ներս  
ընկաւ վանդակի միջով: Զօնին, իբրեւ ամենից  
պստիկին, առաջարկեցին գլուխը վանդակի մի-  
ջով դուրս հանել ու նայել: Այդ յաջողուեցաւ  
նրան. նայեց, բայց ոչինչ մխիթարական բան  
չգտաւ, որովհետեւ իւր ոտքի տակ գտնուում  
էր մի խոր անդունդ, առնուազն 60 ոտնա-  
չափ խորութեամբ, այսինքն իւր պատուհանից  
ներքեւ ժայռը ուղղահայեաց իջնում էր ծովի  
խորքը:

— Դժբաղդաբար ոչինչ յոյս չկայ, — ասաց  
Զօնը կամաց ակն քաշելով ու գլուխը ներս հա-  
նելով, — բայց ինչ կուզէ՝ թող լինի, ես չեմ  
յուսահատուում: Սրտապնդութիւնդ կորցրիր,  
ամեն բան կորաւ:

— Աստուած մի արասցէ, կանչեց Մօռը, —  
մենք երբէք չենք յուսահատուիլ: Այժմ երթանք  
քննք, դարդներս մոռանանք. գլուխս դռդը-  
ռում է:

Նորից եղբայրական սիրով թօթուեցին նը-  
րանք իրարու ձեռք եւ, բարի գիշեր ցանկալով,

պառկեցին յարդի վրայ, Զօնը մէջտեղում,  
իսկ իւր երկու թշուառ ընկերը իւր երկու կող-  
մում: Մինչ նրա միտքը դեռ եւս իւր հայ-  
րենիքում իւր մօր շուրջն էր թափառում,  
նրա երկու ընկերներն արդէն խոր քնել էին  
ու խումիացնում էին. ինքն էլ հենց այդ էր  
ուզում: Կէ՛ որ կարող էր անխռով ու հան-  
գիստ իւր մօրը մտաբերել:

Բայց կեցիր. այս ի՞նչ էր. նրա ականջը  
կիթառի ձայն լսեց, հետը միասին եւ մի բարձր  
երգ: Այդ եղանակը նրան ծանօթ էր: Շտա-  
պով մօտեցաւ պատուհանին: Նա տեսաւ մա-  
կոյկի մէջ նստած մի տղայ, թիերը ներս ա-  
ռած ու կիթառը ձեռքին: Այդ մի եւ նոյն  
պատանին էր, որի ձայնը նա մի ժամանակ  
լսել էր Յէյլօն կղզու մօտ: Այս անգամ էլ  
գերմանական երգի հնչիւններ էին, որոնք նրա  
ականջով սրտի խորքը թափանցեցին եւ այդ  
սիրտը խորին տրտմութեամբ լցրին:

Երգիչը լռեց: Երգի վերջին նուագի հըն-  
չիւնը արիւ սեպացած ժայռերից արձագանգ  
տալով, գնալով նուագեց: Զօնը ուզեց ձայն տալ  
տղային, բայց վախեցաւ գիւշերուան լռութիւնը  
խախտել եւ գուցէ իւր շուրջը աղմուկ հանել,  
որի պատճառով ինքը գուցէ աւելի խիստ հըս-

Վողութեան տակ ընկնէր: Լաւ համարեց ձայն չհանել եւ թողեց, որ տղան իւր մակոյկով յետ դառնայ դէպի այն նաւերը, որոնցից նա բաւական հեռացել էր եւ որոնց կայմերի խտութեան մէջ նրա նաւակը շուտով ծածկուեցաւ:

Վաղ առաւօտից արդէն կանգնած էին մեր բանդարկուածները պատուհանի ետեւում ու դիտում էին Տափել—բայ ծովածոցը, որ չորս կողմից շրջապատած էր հատաքարի ուղղահայեաց ապառաժներով եւ որին արեւելեան կողմից պաշտպանում էին միջնաբերդն ու բազմաթիւ մարտկոցներ: Փրանսիական պատերազմի տարին էր: Այդ էր պատճառը, որ Տափել-բայի գաղթականները, որոնք այդ միջոցին Հոլլանդական իշխանութեան տակ էին, շատ փրանսիական նաւեր գերի էին առել ու այդ ծովածոցը քարշ տուել: Ծովածոցի մոտքը փակած էր երկաթէ շղթաներով:

—Նայեցէք այն տղային, որ դէպի մեզ է թիալարում, կանչեց Կոնրադը, — նա անդադար աչքը տնկած մեզ է նայում:

—Փահ, փահ, ուրախացէք, կանչեց Ջոնը խնդալով, — դա իմ ծանօթն է: Մեր ազատիչն է նա, որ ահա տեսնում էք:

Մինչդեռ Կոնրադը զարմանքից բերանը

բաց էր մնացել, Ջոնը պատմեց նրան իւր հանդիպումը այդ տղայի հետ եւ խնդրեց իւր ընկերներին իւր հետ միասին ողջունել տղային ու մի կերպ նշաններով լրենց կողմը դարձնել:

Այդպէս էլ արին: Երեքն եւս սկսեցին կանչելու նշան անել, հանեցին իրենց փողպատները ու կապեցին պատուհանին, որ ծածանուին օդի մէջ: Տղան ներքեւից նկատեց նրանց գրաւող նշանները ու դարձրեց իւր նաւակը դէպի բանդի ստորոտը: Ջոնը հանեց իւր բաճկոնի գրպանից մի թղթակալ ու շտապով հետեւեալ խօսքերը գրեց.

«Քո հայրենակիցներից երկուսը եւ մի  
«Շոտլանդացի ընկեր անմեղ տեղը տանջւում  
«են այստեղ՝ Հոլլանդացոց ձեռքը գերի ըն-  
«կա՛: Մենք քեզ խնդրում ենք՝ երեկոյեան  
«սյուտեղ գաս, որ մենք քո նաւակով կարո-  
«ղանանք փախչել: Բայց առաջուց մեզ իմաց  
«արա, արդեօք քո կանգնած տեղում ծովը  
«խոր է, եւ իբրեւ նշան, որ դու պատրաստ  
«ես մեր ազատիչը լինելու, ձօճիր փողպատդ  
«մեզ նման»:

Գրեց եւ վարպետութեամբ ձգեց իւր գր-  
րատախտակը տղայի մակոյկի մէջ: Տղան ա-  
րագութեամբ աչքի անցրեց նամակի բովան-

դակութիւնը, յօժարութեամբ գլուխը շարժեց ու ժպտալով վեր նայեց դէպի պատուհանը: Յետոյ առաւ իւր թիերից մինը ու սկսեց ծովի խորութիւնը չափել: Ահագին ձողը գրեթէ բոլորովին թաղուեցաւ ջրի մէջ: Այնուհետեւ նա ճօճեց իւր փողպատը, եւ յետ թիավարելով կանչեց դէպի վեր, Զօնին՝ «ժամը տաճմէկին»:

## 8. ԶԱՐԶՈՒՐԵԼԻ ԳԻՇԵՐ

Սրտատրոփ անհամբերութեամբ սպասում էին բանդարիկուածները գիշերուայ մալթին: Վերջապէս հասաւ գիշերը: Գուրսը լուռութիւն էր տիրում: Լուսինը թաքնուած էր սեւ ամպերի ետեւ, որոնց թափանցելու համար, կարծես, նա ոյժ չունէր: Աղօտ լոյսի մի քօղ տարածուած էր խոր ջրի վրայ, որ հանդարտ ու մանրիկ ալիքներով ողողում էր ծովափի ժայռի ստորոտը:

Հեռուից թիերի զարկ լսուեցաւ:

Զօնն ու իւր ընկերները վազեցին դէպի պատուհանը: Ներքեւը, շատ խորը, ժայռից փոքր հեռու կանգնած էր նաւակը: Անդունդը գլուխ պտտեցնելու չափ սոսկալի էր. բայց

Զօնը մի ակնթարթում պոկեց վանդակի երկաթներէից երկուսը, նստեց պատուհանի եզրին, ոտները վայր կախած, եւ իւր ընկերներին՝ «ներքեւը կը տեսնուինք, եկէք» ձայն տալով, գլխի վայր թռաւ անդունդը: Երկար լուռութիւնից յետոյ վերի նաւաստիները լսեցին վերջապէս փրփրացող ջրի շառաչը, որի ալիքները Զօնի գլխի վրայ փշրուեցան: Զօնը մի քանի կանգուն խոր գնաց եւ ըռպէներ անցան, մինչեւ որ նա ծովի խորքից դուրս լողաց: Նա մի լաւ շունչ քաշեց ու սկսեց, կարծես, իւր թմրութիւնից ուշքի գալ: Յետոյ իւր զօրեղ բազուկներով պատառելով ալիքը, մի քանի վայրկեանում հասաւ նաւակին ու արագութեամբ վրան թռուաւ:

Նոյն վայրկեանին մի նոր շառաչիւն լսուեցաւ ծովի մէջ: Այդ երկու նաւաստիներից մէկն էր, որ Զօնին հետեւելով անդունդը վայր թռաւ. բայց թէ երկուսից ո՞րն էր, հնար չեղաւ որոշել: Յանկարծ մի սուր ճիչ պատառեց գիշերուայ լուռութիւնը: Զօնը նայեց իւր շուրջը եւ տեսաւ ճիշտ մակոյկի կողքին՝ մի մեծ կետ ձուկն, որ, Կոնրադին բերանն առած, երկու ոտնաչափ ջրից վեր ցատկեց եւ նետի արագութեամբ տակը գնաց: Զօնի սիրտը կտոր-

կտոր եղաւ: Սիրով օգնութեան կը հասնէր, բայց ազատեւն անկարելի էր: Զօնն ու իւր ազատիչը ձեռք առան թիերը ու սուս ու փուս, գիշերուան խաւարի պաշտպանութեան տակ, Տափել-բայի մէջտեղով սահեցին ու շտապով հեռացան:

— Ո՛րքան ուրախ եմ, որ քեզ ազատեցի, խօսեց պատանին, — եւ մանաւանդ որ քո մէջ մի հայրենակից գտայ:

— Եւ ես ո՛րքան պարտաւոր եմ քեզ, պատասխանեց Զօնը, ձեռքը տղային մեկնելով:

— Գոնէ շուտով այս անիծեալ ծովածոցից դուրս գայինք, աւելացրեց տղան, — Աստծուն փառք կը տայի: Թշնամին հսկում է, ու նրա աչքը գեշերն էլ սուր է: Բացի դրանից այստեղ ծանծաղներ ու խութեր կան, որոնք անփորձ մարդուն փտանգ են սպաւնում: Պէտք է զգուշութեամբ, հանդարտ . . . անխ:

Մի բարձր ճիւղ արձակեց նա, ու մեր թիւաւորները երկուսն եւս իրենց նստարանների վրայ դէպի յետ թաւայուեցան: Մակոյկը մութը տեղը զարկուելով ծովածոցի տիգաշղթային, որ մեծ աղմուկով ցնցուեցաւ, այնպէս ամուր նստեց նրա վրայ, որ ոչ առաջ կարող էր շարժուել, եւ ոչ յետ: Շղթայի շառաչիւնից

զարթեցին պահապանները, որոնց մի մասը ծովածոցի ափին, միւս մասն առանձին պահնորդնաւակների վրայ գիշերապահ էին կանգնեցրած, եւ հրացանով աղմկի նշան տուին, որին իսկոյն հետեւեց թէ ափի եւ թէ ջրի վրայ մի մեծ իրարանցում: Այժմ պէտք էր շուտ վճիռ կայացնել: Զօնը երկար չմտածեց. թռաւ, ընկաւ ջրի մէջ, որպէս զի առանց նկատուելու կարողանայ ափը դուրս գալ: Բայց յանկարծ ոտքը յատակին առաւ: Բաղդի բերմամբ մեր փախստականների մակոյկը ուղղակի եկել, կանգնել էր ծովածոցի մուտքի մօտ գտնուող մի ժայռի վրայ: Կլտը — այդպէս էր կոչւում Զօնի ընկերը — նոյնպէս ջուրը մտաւ, ու միացած ուժերով յաջողեցաւ նրանց իրենց թեթեւ մակոյկը շղթայի վրայով միւս կողմը հանել: Թեթեւաշարժ մակոյկը նորից առաւ իւր վրայ փախստականներին, ու հայդէ, սկսեցին նրանք սրանալ նետի արագութեամբ ձախ կողմը՝ դէպի ապառաժոտ ծովափը, առանց ուշադրութիւն դարձնելու թշնամու հրագնտերին ու հրափամփուշտներին, որոնք շուտ-շուտ իրարու ետեւից լուսաւորում էին գիշերուան խաւարը, եւ այն գնտալիներին, որոնք սուլում էին նրանց մօտով: Արդէն կարծում էին թէ ա-

զատուած էին, բայց յանկարծ նկատեցին, որ պահականոցից երկու առագաստաւոր նաւակներ, բաւականաչափ մարդկանցով դուրս են եկել եւ ամեն մի ըողէ մի մի գրկաչափ աւելի մօտենում են իրենց:

Այժմ տեսաւ Զօնը, որ իւր նաւակով անկարելի է հալածողների ձեռքից փախչել: Երկու խօսքով իւր միտքը յայտնեց իւր հայրենակցին, ոտք ելաւ ու շիւի-շիտակ կանգնեց թշնամու դիմաց: Իսկոյն մի հրացան պայթեց: Զօնը վարպետութեամբ օգուտ քաղեց դրանից եւ, իբրեւ գնտակահար եղած, ծովն ընկաւ: Կլոսը, նաւակի մէջ մենակ մնալով, ընկու թշնամիների ձեռքը, որոնք Զօնին սպանուած կարծելով, իրենց միակ գերիով բաւականացան ու խեղճ տղային քարշ տուին, տարան յետ դէպի Կապշտագ:

Մինչ այդ, Զօնը մի առժամանակ անձնատուր եղաւ ալիքների ընթացքին, բայց երբ նկատեց, որ հալածողների ձայնն ու ծալտունը չէ լսում, լարեց իւր յոգնած ձեռք ու ոտքը եւ աշխատեց ամիսն հասնել — ծանր աշխատած, որովհետեւ իւր հագուստը, բոլորովին թրջուած, ուրեմն եւ սովորականից սաստիկ շատ ծանրացած լինելով, լող տալուն խիստ արգելք էր լինում:

Բայց եւ այնպէս նրա մատաղ ուժերը ընդդիմացան վտանգին, եւ նա կիսով չափ չնչասպառ հասաւ ափին: Բայց ահա նոր սարսափ, ափը դուրս գալու հնար չկայ. ամեն տեղ ցից ապառաժներ, անյատանկ ծով: Նա լողալով շրջում է մէկ ժայռից դէպի միւսը: Արդէն մօտ է յուսահատուելուն, բայց ահա աչքին ընկաւ մի փոքրիկ զառիվայր, որին ալիքները այնքան սաստիկ չէին զարկում:

Ամենամեծ ճիգը թափելով հասաւ այդ զառիվայրին ու նրա այն կողմում տեսաւ մի խորշ, իբրեւ մի նաւահանգիստ փրկութեան: Այդտեղ ափը դուրս եկաւ նա, վայր ընկաւ ուժասպառ: Որքան փորձ փորձեց վեր կենալ, հնար չեղաւ: Մի սաստիկ տենդ սկսեց ցնցել նրա անդամները, որոնցից ոչ մինը չկարողացաւ շարժել. իսկ վրայի թաց հագուստը, գիշերուայ սառնութեան մէջ, դուրս էր խլում նրա կեանքի վերջին տաքութիւնը:

«Աստուած իմ», հառաչեց նա նուազ ձայնով, «այս է այն երջանկութիւնը, որ երազում էի: Ահա, մայրիկ, մայրիկ, երեւեկ քեզ մօտ լինէի»:

Զօնի սիրտը դողաց ու սառեցաւ, կար-

ծես, թէ մահուան հրեշտակի ձեռքը շօշափեց նրան: Սառն տենդը ընկճում էր նրա զգայարանքը: Նա ուշաթափ եղաւ:

### 9. ԱՆՍՊԱՍԵԼԻ ԴԷՊՔ

Երբ Զօնը աչքը բաց արեց, տեսաւ, որ ինքը մի սիրուն սենեակի մէջ է, որի առաստաղը վարսաւոր արմաւենու տերեւներից էր կազմուած: Մի գոյգ գոթական սրակամար պատուհանների միջով, որոնք թգենու ու վազի տերեւներով շրջապատած էին, արեւը կրակի նման կարմիր լոյս էր գցել դիմացի պատի վրայ: Իւր դէմուդէմը՝ պատի խորշի մէջ դրուած էր խաչելութիւնը:

— Այս ուր եմ ես, ասաց Զօնը ու շքի գալով ու ձեռքով ճակատը շփելով:

— Ապահով տեղ ես, որդեակ, պատասխանեց մի բամբէ ձայն, ու Զօնի անկողնին մօտեցաւ մի ծերունի, մոյգ ֆարաջան հագին, որի վրայ փռուել էր արծաթի պէս ճերմակ երկայն մօրուքը: — Օրհնեալ է անունն Աստուծոյ եւ փառք նրա ողորմութեանը, որ դու վերջապէս աչքդ բաց արիր: Դու անգաղար քո

անմխիթար մօր անունն էիր տալիս, որ . . .

— Միթէ ես նրա մօտ չէի, պատուարժան հայր:

— Երազումդ՝ այո՛, բայց իրօք՝ ոչ:

— Անկարելի է, հայր սուրբ, կանչեց տղան, — անկարելի է, որ այդ բոլորը երազ լինէր:

— Գոհացիր Աստուծուց, որ այդ երազը վերջացաւ, վրայ բերեց ծերունին: — Դու շատ ծանր յանցանք ես գործել քո մօր սիրող սրտի դէմ: Այդ պատճառով Աստուծոյ պատիժն էլ քեզ համար այդքան ծանր եղաւ: Ես յոյս չունէի թէ դու կ'առողջանաս:

— Մի կաթիլ ջուր, շնորհաց Զօնը:

Ծերունին մի բաժակ պաղ ջուր տուաւ նրան:

Զօնը փակեց իւր յոգնած աչքերը ու խոր, կ'սղդուրիչ բուն մտաւ:

Կեանքը մահին յաղթել էր: Զերմը նուազեց: Բայց դարձեալ ամիսներ անց կացան մինչեւ որ Զօնը այնքան առողջացաւ, որ կարողացաւ սենեակից ոտքը դուրս գնել:

Մի առաւօտ, գարնան հրաշալի օրերից մէկն էր, ծերունին Զօնի թեւը իւր տակն առաւ ու այդ հիւանդադարձի հետ երկուսը միասին մի նեղ կածան բռնած գնացին սարի

գազաթը բարձրացան: Այդտեղ, ժայռի տափարակ գազաթի վրայ նստեցին նրանք, Զօնը մի մամռապատ քարի վրայ, իսկ ծերունին իւր ձեռքով շինած մի նստարանի վրայ:

— Մեր բաժանման ժամը հասել է, սկսեց ծերունին, ձեռքը Զօնի գլխին դնելով:

— Բաժանման ժամը, հարցրեց Զօնը:

— Այո՛, որդեակ, պատասխանեց ծերունին: — Որքան էլ ծանր լինի ինձ համար քեզնից բաժանուելը, եւ որքան էլ սիրով կըպահէի քեզ ինձ մօտ, իբրեւ նեցուկ իմ ծերութեան, — բայց եւ այնպէս իմ կողմից անդրթութիւն կըլինէր քեզ ճանապարհ չդնել, քանի որ գիտեմ, որ յուսահատ մայրդ տառապեալ սրտով, կարօտալից աչքերով ճանապարհիդ է սպասում: Դու մի ծանր յանցանք ունիս ուղղելու, Զօնիկս, մի շատ ծանր մեղք: Դու մեղանջել ես Աստուծոյ գլխաւոր պատուիրանքի դէմ, որ ասում է՝ «Պատուիր հօրդ եւ մօրդ»: Քո յանցանքը մեծ է, բայց մեծ է եւ Աստուծոյ գութը: Զղջումը սկիզբն է նոր կեանքի, այն կեանքի, որ Աստուծուն է հաճելի:

— Անկասկած, հայրիկ, վրայ բերեց Զօնը, — ես վաղուց եմ զղջացել իմ յանցանքը եւ ամեն օր աղաչել եմ Աստուծուն, որ ինձ իմ

անձներէի թեթեամտութիւնից դէպի ուղիղ ճանապարհը հանի. ես իմ խոստումը կըկատարեմ: Զէ՛ որ մօրս վշտահար պատկերը գիշեր ցերեկ աչքիս առջեւն է: Երբ նրան կրկին տեսնեմ, նրա արցունքը կըցամաքեցնեմ, այն ժամանակ . . .

Թնդանօթի սաստիկ ճայթիւններ, ծովի կողմից գալով, նրա խօսքը կտրեցին: Ապա շտառի խորագիր նաւահանգստից լսում էին խառնաշփոթ, սոսկալի աղաղակներ — լացի ձայն, կեցցէներ, ուրախութեան ճիչեր՝ իրարու խառնուած, միեւնոյն ժամանակ սրերի բաղխումն, հրացանների պայթիւններ: Զօնը սարսափած վեր թռաւ նստած տեղից եւ ապշած աչքերով սկսեց նայել ներքեւ՝ դէպի խոր ու ընդարձակ հովիտը: Ծովի վրայ նաւերը, առանձին նաւատորմերի բաժանուած, ծխի ու բոցի մէջ ծածկուած, կատաղի պատերազմ էին մղում իրարու դէմ: Շուտով վառօդի թանձր ծուխը ամեն բան ծածկեց եւ միմիայն բոցեր ու կրակէ կայծեր ճղում էին երբեմն այդ թանձր մառախուղը:

— Այս ի՞նչ բան է, հարցրեց Զօնը:

— Փրկութիւն եւ բողդ, պատասխանեց ծերունին: — Քո ազատութեան ժամը հասել է:

Ահա, այն նաւատորմի վրայ, որտեղից յաղթութեան ձայներ են հնչում, Անգլիացիք են, որոնք Կապշտատի նաւահանգստի վրայ յարձակուելով քաջութեամբ առան ու խրոխտ Հռլանդացոց հպարտութիւնը կոտրեցին: Իջիր այժմ ներքեւ դէպի հովիտը: Զախ կողմի ճանապարհով անվտանգ կը հառնես քաղաք: Աւելորդ եմ համարում քեզ ասել, որդեակ, թէ ինչ պիտի անես, որ հայրենիքդ վերադառնաս: Միայն այս նուէրն ընդունիր ինձնից: — Այս ասելով նա Զօնի ձեռքը դրեց երկու հարիւր թալերանոց թղթադրամ: — Այդ գումարը մի վկայ է իմ առաջուան երկրաւոր վաստակի եւ ինձ պէս ճգնաւորին այլ եւս բանի պէտք չէ, իսկ քեզ շատ հարկաւոր է ճանապարհորդութեանդ համար: Բայց մեկնելուցդ առաջ գըլուխդ խոնարհիր, որ քեզ օրհնեմ:

Պատանին չոքեց ծերունու առջեւը, որ իւր ձեռքը դնելով նրա գանգրամազ գլխի վրայ, տխուր ձայնով ասաց. «Աստուած քեզ պահապան լինի եւ իւր հայրական աջը քո գլխից անպակաս անի: Նա ինքը քեզ զօրութիւն տայ, առաքինի եւ հասաւորուն մնալու եւ արժանացնի քեզ այն ուրախութեանը, որ քո սիրտը այնպէս կարօտով փափագում է,

այսինքն քո բարի ու սիրասուն մօրդ կենդանի տեսնելու»:

Նա սեղմեց շնորհակալութեան խօսքեր թոթովոյ Զօնին իւր կրծքին եւ արցունքը աչքին ճանապարհ դրեց նրան: Զօնը օձապտոյտ կաճանը բռնած վայր իջաւ դէպի հովիտը: Սարի ստորոտում կանգ առաւ, երեսը դարձրեց ու նորից նայեց դէպի գագաթը: Ծերունին դեռ կանգնած էր այնտեղ, իւր գաւազանին յենուած, եւ տխուր ու տրտում նայում էր իւր սիրելի պատանու ետեւից: Տղան վերջին անգամ ձեռքով մնաս բարեւի նշան արեց ու անհետացաւ ժայռի ետեւը:

## 10. ԱՄԵՆ ԲԱՆԻ ՎԵՐՋՆ Է ԳՈՎԵԼԻ

Որովհետեւ Կապշտատի գաղթականութիւնը Անգլիացոց ձեռքն անցաւ, կասկած չկար, որ շատ հողանդական նաւեր դէպի Եւրոպա պիտի վերադառնային: Այդ պատճառով Զօնը դիմեց հենց առաջին հանդիպած հողանդական նաւի նաւապետին, որ ամենայն յօժարութեամբ ընդունեց նրան իւր կամաւոր նաւի վրայ, մանաւանդ որ պատերազմի պատ-

ճառով, բոլոր առեւտրական նաւերի վրայ նաւաստիների մեծ պակասութիւն կար: Նա առանց այլեւայլութեան ծառայութեան ընդունուեցաւ եւ առատութեամբ կրկին ձեռք բերեց այն բոլորը, ինչ որ իւր բանգարկութեան միջոցին կորցրել էր: Նաւը առագաստները պարզեց ու ճանապարհ ընկաւ եւ դժուար նաւորգութիւնից յետոյ, ողջամբ հասաւ Ամստերդամի նաւահանգիստը, որտեղից Զօնը դէպի իւր կարօտեալ հայրենիքը նաւարկեց:

Բայց ի՞նչ զգաց նրա սիրտը, երբ Հելա հրուանդանի միւս կողմը անցնելով, իւր հայրենի քաղաքի լայն կիսաշրջան կազմող Սաթի ծովափը, իւր մանկութեան օրրանը, հետզհետէ աւելի որոշ կերպով դուրս լողաց հորիզոնի վրայ:

Շատ չանցաւ, եւ ահա նաւը խարխիւ ձգեց ու կանգ առաւ: Զօնը առաջինն էր, որ ցամաք դուրս թռաւ: Նա ուրախութիւնից պատրաստ էր չորել, գետինը համբուրել: Շուտով իւր ունեցած չոնեցածը ու իւր ճանապարհորդութեան յիշատակները թելի տակն առաւ: Նա սրտանց շնորհակալութիւն անելով իւր պատուական նաւապետին ու նաւաստիներին, սրտատրուի վազեց դէպի քաղաք: Ահա մտաւ նա

մի նեղ փողոց եւ ուրախութիւնից դողալով կանգ առաւ իւր մօր տնակի առջեւ: Հարեւանի դռանը կանգնած էր մի ծեր մարդ, ձկնորսի թոռը ձեռքին: Նա ճանաչեց նորեկին, վախեցած, ձեռքերն այնպէս իրարու զարկեց, որ թոռը ձեռքից վայր ընկաւ, ու բարձր ձայնով ճչաց. «Աստուած իմ, այդ դժուր էք,՝ Զօն,— ի՞նչ ուրախութիւն, մեր Զօնն եկել է, մեր Զօնը»:

— Մայրս ո՞ղջ է, Նիկկաս:

— Նա քեզ մեռած է կարծում ու սուգ է անում. բայց, փառք Աստուծոյ, որ դուք վերադարձաք,— Է՛յ, սպասեցէք. թողէք ես առաջ ներս մտնեմ, թէ չէ մայրդ ուրախութիւնից կըմեռնի: Այս ասելով տղային դռնից հեռացրեց ու ինքը ներս մտաւ:

Բայց դրսի խօսակցութիւնը հասել էր մօր ականջին, եւ նա Զօնի ձայնը ճանաչել էր: Ուրջան ուժ ունէր շտապեց դէպի դուռը, բազուկները բաց արած՝ իւր աչքի լոյսին գրկելու: Բայց երբ կորած կարծուած որդուն իւր սրտին սեղմեց, բուռն զգացման տակ վայր ընկաւ ու ուշքը գնաց: Զօնը գլուխը կորցրեց: Նա գողալով ընկաւ իւր մօր վրայ եւ արցունքով թրջեց նրա գունատ երեսը, մինչեւ որ

մայրը ուշքի հկաւ: Յետոյ ընկաւ նրա ոտքերը, փաթաթուեց նրա ծնգներին, երդումով հաւատացրեց իւր զղջումը ու խոստադաւ իւր կեանքը լաւ ճանապարհով շարունակել:

Մայրը պահանջում էր, որ նա արկածախնդիր մտքերից ձեռը վեր առնի եւ, իրեն հաւատարիմ մնալու համար, ծովաշրջիկ կեանքը միանգամայն թողնի: Որքան էլ ծանր թուէր Զօնին այդ պահանջը, այնու ամենայնիւ, իւր մօրը այլ եւս անհանգստութիւն չպատճառելու համար, առ ժամանակյանձն առաւ մօր խնդիրը կատարել: Այդ պատճառով հաստատ որոշումն արեց վաճառականութեան նուիրուելու եւ Ռանցիգում առեւտրի հետ ծանօթանալու, եւ այդ բանում ճգնաւորից ստացած թղթադրամը նրան մեծ օգուտ բերեց: Մը եւ նոյն ժամանակ մի նշանաւոր առեւտրական տուն նրան ծառայութեան ընդունեց:

Այժմ Զօնը բոլորովին նուիրուեցաւ իւր կոչմանը եւ աշխատում էր իւր ճշմարիտ ու եռանդուն ծառայութեամբ մօրը ուրախացնել ու անցուկը մոռցուկ դարձնել: Իւր հաւատարմութեամբ ու անարատ վարքով սիրելի եղաւ իւր տիրոջը, եւ սա երեք տարուց յետոյ առաջարկեց նրան իւր գործի մէջ ընկեր լի-

նել: Ո՞վ կարող էր Զօնից աւելի բաղդաւոր լինել: Այժմ կարող էր նա իւր սիրելի մօր համար, մինչեւ նրա կեանքի վերջը, առատօրէն ամեն բան հոգալ, եւ նա երբեք չզղջաց իւր բարի մօր կամքը կատարած լինելուն համար:

Die erste Sitzung der Gesellschaft wurde am  
1. April 1847, Sonntag, im Saale des  
Königlichen Hoftheaters, unter  
Präsidium des Königs, im Saale  
des Hoftheaters, im Saale des  
Hoftheaters, im Saale des Hoftheaters.

Die zweite Sitzung wurde am  
8. April 1847, Sonntag, im Saale  
des Königlichen Hoftheaters, unter  
Präsidium des Königs, im Saale  
des Hoftheaters, im Saale des  
Hoftheaters, im Saale des Hoftheaters.

Die dritte Sitzung wurde am  
15. April 1847, Sonntag, im Saale  
des Königlichen Hoftheaters, unter  
Präsidium des Königs, im Saale  
des Hoftheaters, im Saale des  
Hoftheaters, im Saale des Hoftheaters.

Die vierte Sitzung wurde am  
22. April 1847, Sonntag, im Saale  
des Königlichen Hoftheaters, unter  
Präsidium des Königs, im Saale  
des Hoftheaters, im Saale des  
Hoftheaters, im Saale des Hoftheaters.

Die fünfte Sitzung wurde am  
29. April 1847, Sonntag, im Saale  
des Königlichen Hoftheaters, unter  
Präsidium des Königs, im Saale  
des Hoftheaters, im Saale des  
Hoftheaters, im Saale des Hoftheaters.

Die sechste Sitzung wurde am  
6. Mai 1847, Sonntag, im Saale  
des Königlichen Hoftheaters, unter  
Präsidium des Königs, im Saale  
des Hoftheaters, im Saale des  
Hoftheaters, im Saale des Hoftheaters.

1526

1527

1528

1529

2013

31. ԿՈՄՍ Լ. ՏՕԼՍՏՈՅ, Աստուած գիտէ՝ իմ  
է արդար. . . . . — 7
32. ՎԼԻԳՆԻՐ, Հաւատարիմ Սափարին, գերմ.  
Թարգմ. Փ. Վարդանեան . . . . . — 10

Նոյն տեղում վաճառում են նաեւ Բնկերութեան  
նիւոնեալ գրքերը

1. Ուսումնարանների առողջապահութեան  
հարցեր, բժ. Ա. Բաբայեանի . . . . . 1 —
2. Կրքեր և նոցա ազդեցութիւնը առող-  
ջութեան վրայ, բժ. Ա. Բաբայեանի. . . . . — 30
3. Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի. . . . . 2 —
4. Թորոս Լեոնի, Ծերենցի. . . . . 1 —
5. Թէոդորոս Ռշտունի, Ծերենցի. . . . . 1 —
6. Երկունք Թ. գարու, Ծերենցի. . . . . 1 —

Մամուլի տակ են՝

ՀԵՆՐԻԻ ՊԵՏՏԱԼՈՅԻ, Լինհարդ և Գերտրուդ  
ՄԱՔՍ ՌՈԶԷՆՄԱՆ, Նաւի փոքրաւորը:

ԳԻՆՆ ԷՄՈ ԿՈՊ.